Ազգ
Azg
15 ՅՈՒՆՈՒԱՐ 2010 ՈՒՐԲԱԹ 4(4385)
ISSN: 1829-1651

## Մեծ Բրիտանիայում մեծ թափ է ստանում Հայոց ցեղասպանության ճանաչումը

Ֆրանսիայից լրագրող Ժան Էքիյանը տեղեկացնում է, որ բրիտանական պառլամենտի շոտլանդացի, ուելսցի եւ հյուսիսիռլանդացի անդամների մեծամասնությունը ընդունում է ցեղասպանության փաստը: Թերթի տվյալներով՝ այս ամենի համար հող է նախապատրաստել նաեւ հայկական լոբբին, որը լուրջ ճնշում է գործադրում Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունի վրա, որպեսզի վերջինս նույնպես ճանաչի 20-րդ դարի մեծ ոճիրը: Այսպիսով՝ պառլամենտի 59 շոտլանդացի անդամներից 37-ը ընդունում են ցեղասպանության փաստը, 13-ը արտահայտվել են դեմ: Իսկ Հյուսիսային Իռլանդիան ներկայացնող 18 ներկայացուցիչներից 11-ն են ճանաչում ցեղասպանությունը: Հավելենք նաեւ, որ 2006-ին եւ 2007-ին Ուելսի ներկայացուցիչների մեծամասնությունը նույնպես դատապարտել է 1915-ին Օսմանյան կայսրությունում իրականացված հայերի ցեղասպանությունը:

Հ. Ա.

## Էներգետիկ շահերը՝ պակաս թանկ, քան ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքը

### *Ռուսաստանի ԱԳ նախարարը ճիշտ չի համարում հայ-թուրքական գործընթացում արհեստական պայմաններ առաջ քաշելը*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի պաշտոնական այցը Երեւան ծրագրվել է մեկուկես ամիս առաջ, իսկ Մոսկվա Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի այցելությունը տեղի է ունեցել թուրք պաշտոնյայի վերջերս հայտնած ցանկության համաձայն: Այս մասին երեկ Երեւանում հայտարարել է Հայաստանում գտնվող ՌԴ արտգործնախարար **Սերգեյ Լավրովը**՝ իր հայաստանյան գործընկեր Էդվարդ Նալբանդյանի հետ համատեղ ասուլիսում:



Ներկայացնելով Հայաստան-Ռուսաստան արտաքին գերատեսչությունների ղեկավարների մակարդակով անցկացված քննարկումների օրակարգային հարցերը՝ Լավրովն ու Նալբանդյանը այդուհետեւ պատասխանել են լրագրողների հարցերին: Մասնավորապես, հարցին, թե վերջին ժամանակներում ԼՂ հարցում լճացում է նկատվում ու ռազմական գործողությունների վերսկսման մտահոգություններ կան, ԱԳ նախարար Նալբանդյանը չի համաձայնել լճացման գնահատականին:

Ըստ Նալբանդյանի, կա դրական դինամիկա, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների մակարդակով ակտիվ հանդիպումները՝ վեց երկկողմ եւ երեք եռակողմ, դրական դինամիկայի վկայություն են: «Հանդիպումների քանակն արդեն խոսում է դրական դինամիկայի մասին», հայտարարել է Նալբանդյանը, կարեւորելով նաեւ ԵԱՀԿ նախարարական խորհրդի վերջին նիստի շրջանակներում ընդունված հայտարարությունն առ այն, որ ԼՂ հակամարտությունը պետք է լուծել խաղաղ ճանապարհով եւ բանակցությունների միջոցով՝ առանց ուժ կիրառելու սպառնալիքների:

*Տես էջ 2*

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ**

## Ղարաբաղը եզակի տարածք է, որտեղ ժողովուրդը սիրում է իր զինվորին

ԼՂՀ պաշտպանության նախարար **Մովսես Հակոբյանը** երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում 2009 թվականը հաջողակ է համարել պաշտպանության բանակի համար: Մասնավորապես, նրա խոսքով, հակառակորդին չի հաջողվել շփման գոտում դիրքային առաջխաղացում ունենալ, այն դեպքում, երբ ԼՂՀ պաշտպանության բանակը մի շարք հատվածներում դիրքային բարելավումներ է իրականացրել:

Բանակում կորուստների ու վիրավորների թիվը նկատելիորեն նվազել է, տեղեկացրեց նախարարը: Նույնը կարելի է ասել նաեւ հանցագործությունների մասին:

Աղդամի շրջանում նոր պաշտպանական կառույցներ ստեղծելու կապակցությամբ Մովսես Հակոբյանը նշեց, որ դա իրականացվում է պլանային խնդիրների շրջանակում եւ ոչ մի կապ չունի շրջանառվող մեկնաբանությունների հետ: Նման ինժեներական նորակառույցներ նախատեսվում են նաեւ մյուս շրջաններում, որի նպատակը բացառապես պաշտպանունակության ամրապնդումն է: Պատասխանելով նույն համատեքստում լրագրողների տված հարցերին, մասնավորապես մադրիդյան սկզբունքների եւ Ադրբեջանի ռազմատենչ հռետորաբանության առնչությամբ, նա ասաց, որ Ջեբրայիլի շրջանում, օրինակ, 1000 տեղանոց զինվորական ճաշարան է կառուցվել, եւ բթամտություն կլինի խոսել ինչ-որ տարածքների հանձնման մասին: Բանակցային գործընթացը եւ պաշտպանական միջոցառումները տարբեր բաներ են, նկատեց նախարարը, փոխանակ ամեն օր քաղաքականությունից խոսելու՝ պետք է պարզապես աշխատել, հաջողությունների գրավականն ամենօրյա տքնաջան աշխատանքն է: Իսկ պատերազմը հայտարարություններով չեն սկսում, թեպետ իր համար որպես ՊԲ հրամանատարի՝ առաջնային գծում միշտ էլ պատերազմ է, քանզի 16 տարի շարունակ այդտեղ մարտական հերթապահություն է իրականացվում, որն ուղեկցվում է հաճախակի փոխհրաձգություններով:

Լրագրողները փորձեցին իմանալ առաջնային գծից դիպուկահարների հեռացնելու՝ Անջեյ Կասպրշիկի առաջարկության ձախողման պատճառը: Պատճառը Ադրբեջանն է, նշեց նախարարը, հակառակորդ կողմը չի ուզում մեզ հետ ուղղակի պայմանավորվել, եւ քանի դեռ չկա նման պայմանագիր՝ հնարավոր չի լինի դիպուկահարներին հեռացնել առաջնագծից:

Բանակ-հասարակություն կապի ամրության վերաբերյալ Մովսես Հակոբյանն ասաց հետեւյալը. Ղարաբաղը եզակի տարածք է, որտեղ ժողովուրդն իսկապես վստահում ու սիրում է իր զինվորին, չէ՞ որ երկրի անվտանգության միակ երաշխավորը պաշտպանության բանակն է: ԼՂՀ զինված ուժերի անպարտելիությունը հենց դրա մեջ է:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

## Դմիտրի Մեդվեդեւը հրավիրել է Սերժ Սարգսյանին Մոսկվա

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրավերով հունվարի 18-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հետ կմեկնի Մոսկվա:

Նախագահի մամուլի քարտուղար **Սամվել Ֆարմանյանի** խոսքերով՝ երկու նախագահները քննարկելու են Հայաստան-Ռուսաստան ռազմավարական հարաբերությունների խորացման հնարավորություններն ու տարածաշրջանային այլ հարցեր: Ֆարմանյանը չի բացառել, որ երկու երկրների նախագահներին միանա նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

«Քանի դեռ ղարաբաղյան հակամարտությունը լուծված չէ, բնական է, որ նախագահներ Սարգսյանն ու Ալիեւը պետք է հաճախակի հանդիպեն: Իսկ ինչ վերաբերում է այսպես կոչված «նորացված մադրիդյան սկզբունքներին» եւ թե ՌԴ արտաքին գործերի նախարար Լավրովը այս փաստաթուղթը բերել է Հայաստան, ապա այդ տեղեկությունը ոչ մի կերպ չի համապատասխանում իրականությանը», եզրափակել է Սամվել Ֆարմանյանը:

Հ. Ա.

## Արմեն Հարությունյանն ու ՍԴ-ն՝ հօգուտ փաստաբանների

Սահմանադրական դատարանը երեկվա նիստում հակասահմանադրական է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 343 հոդվածը, որով տուգանք կամ մինչեւ 3 ամիս կալանք պատիժ էր նախատեսվում դատարանի հանդեպ անհարգալից վերաբերմունքի համար: ՍԴ-ին էր դիմել մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը: Հիշեցնենք, որ հետմարտիմեկյան գործերում զբաղված 4 փաստաբանների՝ Մուշեղ Շուշանյանի, Արա Զաքարյանի, Արթուր Գրիգորյանի եւ Դիանա Գրիգորյանի դեմ քրեական հետապնդումներ կային այդ հոդվածով, իսկ ՍԴ որոշումից հետո դատարանները պետք է կարճեն այդ գործերը, քանի որ այդ հոդվածը ՍԴ որոշման արդյունքում «ոչ եւս» է եղել:

## Հայտարարություն

**Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցությունը ուշադիր հետեւում էր հունվարի 10-ին Երեւան քաղաքի թիվ 10 ընտրատարածքում տեղի ունեցած ընտրություններին եւ ցավով արձանագրում է, որ այս ընտրությունները հերթական անգամ ապացուցեցին Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացի ձեւական բնույթը՝ այս անգամ էլ ուղեկցված տարատեսակ անօրինականություններով ու խժդժություններով: Դրա խոսուն վկայությունն է մասնակցության ծայրահեղ ցածր տոկոսը (24,5%): Սա միաժամանակ նշանակում է, որ Հայաստանում գործող հիմնական քաղաքական ուժերը՝ ընդդիմություն թե կոալիցիա, չեն վայելում ժողովրդի մեծամասնության վստահությունը: Այս ընտրությունները ցույց տվեցին նաեւ, որ ընտրական ներկա համակարգը իրեն լիովին սպառել է, հետեւաբար անհրաժեշտ է դառնում ընտրությունների օրենքի արմատական փոփոխումը:**

**Ընտրությունների նկատմամբ նման անտարբերությունն ընդգծում է բնակչության անվստահությունը քաղաքական ներկա համակարգի նկատմամբ եւ երկրի ներքաղաքական կյանքի փակուղային վիճակը: Ստեղծված դրությունից դուրս գալու համար նախ եւ առաջ հարկավոր է քաղաքական դաշտ կոչվածի արմատական փոփոխություն: Հայաստանում ընտրությունները եւ քաղաքական գործունեությունը կարծես դարձել են որոշ շրջանակների մենաշնորհը, որոնք, միմյանց միջեւ պայքարելով իշխանության համար, իրենց հեռացրել են ժողովրդից, չեն արտահայտում նրա շահերը, անհաղորդ են նրա ցավերին եւ իրենց հեռու են պահում հիմնական խնդիրներին իրական լուծումներ տալուց:**

**Ընտրությունները մեկ անգամ եւս ապացուցեցին, որ երկրում գոյություն ունեցող քաղաքական-կուսակցական համակարգը հիվանդ է, եւ Հայաստանի զարգացման համար հարկավոր են նոր քաղաքական ուժեր, նոր մտածողության տեր մարդիկ, որոնք առաջնահերթ մտահոգված կլինեն ժողովրդի եւ երկրի շահերով:**

*Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչություն*

## ՀԲ-ն եւ ՄԱԿ-ը կօգնեն Հաիթիին

Հաիթիի նախագահ Ռընե Պրեւալը CNN-ին տված հարցազրույցում ասել է, որ, իր նախնական տվյալների համաձայն՝ հունվարի 12-ի երկրաշարժի զոհերի թիվը կարող է կազմել 30-100 հազար մարդ: 7 բալանոց երկրաշարժից եւ դրան հաջորդած քիչ ավելի թույլ ցնցումներից ավերվել են բազմաթիվ շենքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, նախագահական պալատը եւ այլն: **«Ազգը»** երեկ գրել է այդ մասին:



Երկրի վարչապետ Ժան-Մաքս Բելռիվը իր հերթին CNN-ի թղթակցին ասել է, որ, իր հաշվարկների համաձայն, զոհերի թիվն անցնում է 100 հազարից: Հաիթցի ուրիշ պաշտոնական անձինք նշել են էլ ավելի մեծ թվեր: Այսպես, սենատոր Յուրի Լատորտյուն Ասոշիեյթեդ պրես գործակալությանը տված հարցազրույցում ասել է, որ զոհերի թիվը գուցե հասնի կես միլիոնի:

Մայրաքաղաք Պորտ օ Պրենսում ՄԱԿ-ի ներկայացուցչության շենքը լրջորեն վնասված է, 16 աշխատակիցներ զոհված են, 150-ը՝ անհետ կորած: ՄԱԿ-ի զոհված աշխատակիցների մեջ միայն բրազիլացիները 10 հոգի են:

Շատ պետություններ սկսել են Հաիթիին օգնել երկրաշարժի հետեւանքների վերացման գործում: ՄԱԿ-ի ֆինանսական օգնությունը կազմում է 10 մլն, Համաշխարհային բանկինը (ՀԲ)՝ 100 մլն դոլար: Կանադան աղետյալ բնակչությանը հատկացրել է 5 մլն դոլար շտապ օգնություն: Ամերիկյան շոու-բիզնեսի գործիչները միջոցների հանգանակման արշավ են սկսել:

AZG NEW PDF.qxd 1/14/2010 11:29 PM Page 1



# Վերապահումներ անելը իրավական առումով սխալ է, քաղաքական առումով՝ վնասակար

Սահմանադրական դատարանը հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ իր ընդունած փաստաթղթով մատնանշեց մեր դիվանագիտության սխալները: Այս մասին երեկ հայտարարեցին Սահմանադրական դատարանի աշխատակազմի միջազգային պայմանագրերի բաժնի վարիչ **Վլադիմիր Վարդանյանն** ու սահմանադրագետ **Վարդան Պողոսյանը**: «Ես ուզում եմ շեշտել, որ մենք ոչ թե քաղաքական որոշում ենք կայացրել, այլ զուտ իրավական, ընդ որում մեր կողմից մտահոգություններին արձանագրություններում վերապահումների կարգավիճակ տալը ես համարում եմ իրավական առումով սխալ, իսկ քաղաքական առումով՝ վնասակար երկրի համար, ուստի ԱԺ-ն արձանագրությունները պետք է վավերացնի առանց վերապահումների», նկատեց Վարդանյանը: Ըստ երկու բանախոսների էլ՝ երկկողմ միջազգային պայմանագրերում վերապահումներ անելն անհեթեթություն է. «Պայմանագրերում վերապահումներ միջազգային պրակտիկայում սովորաբար արվում է դրանց բազմակողմանի լինելու դեպքում, ընդ որում սա էլ հաճախակի չի կատարվում», նշեց Պողոսյանը: Իսկ եթե Հայաստանը վերապահումներ է մտցնում արձանագրություններում, ապա, երկու իրավաբանների խոսքերով էլ, Թուրքիան կունենա լիարժեք իրավունքներ հրաժարվելու գործընթացից. «Կարծում եմ, ոչ մեկս չենք կասկածում, որ Թուրքիան չի ընդունի մեր առաջ քաշած վերապահումները, նույնիսկ առանց այդ վերապահումների ակնհայտ է, որ թուրքերը արհեստականորեն ձգձգում են գործընթացը», նկատեց Վլադիմիր Վարդանյանը:

Բանախոսներն անդրադարձան նաեւ նախագահ Սարգսյանի առաջարկին՝ երկրի օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Վարդանյանը դա անհրաժեշտ համարեց, քանի որ Թուրքիայի ներկա քաղաքականությունը կարող է հանգեցնել նրան, որ Հայաստանը իրոք մի օր հետ կանգնի իր իսկ սկսած գործընթացից ու ստորագրությունից:

Անդրադառնալով հայկական դիվանագիտության սխալներին՝ երկու իրավաբաններն էլ նշեցին, որ ամենեւին կարիք չկար Թուրքիայի հետ պայմանագրով ամրագրելու համատեղ սահմանները. «Սա մեր ԱԳՆ-ի կողմից սխալն է, քանի որ սահմանների ճանաչումը ոչ մի կապ չունի բուն գործընթացի հետ, իսկ դա դիվանագիտական հարաբերությունների հաստատումն է ու սահմանների բացումը», շեշտեց Վարդանյանը՝ հայտնելով նաեւ իր տարակուսանքը, թե ինչու՞ Հայաստանը մինչեւ այսօր միջազգային կազմակերպություններում չի բարձրացրել հարցը, որ Թուրքիան առանց պատերազմական գործողությունների, փաստորեն, պատերազմական, թշնամական իրավիճակ է ստեղծել հարեւան Հայաստանի հետ՝ միակողմանի փակելով սահմանը:

Վերջում բանախոսները շեշտեցին, որ Սահմանադրական դատարանը, առաջնորդվելով միայն ՀՀ սահմանադրությամբ ու սահմանադրության մասին օրենքով, ընդունել է բավական օբյեկտիվ փաստաթուղթ, եւ իր քննարկումներում առաջին հերթին անդրադարձել է բուն խնդրին. սահմանի բացում եւ դիվանագիտական հարաբերություններ: Մնացած բոլոր «հայ-թուրքական հարցերը», ըստ բանախոսների, ածանցյալ են այս հարցերից:

Տարօրինակն այս ամենի մեջ այն է, որ երկու իրավաբաններն էլ, ընդունելով եւ նույնիսկ մատնանշելով, թերություններ արձանագրությունների մեջ, անհրաժեշտ չեն համարում դրանցում վերապահումներ մտցնելը. «Ցանկացած միջազգային պայմանագիր, փաստաթուղթ լի է թերություններով, սակայն քանի որ Թուրքիայի հետ մենք չափազանց զգայուն հարաբերություններ ունենք, ապա այդ թերություններն ավելի են երեւում», եզրափակեց Վարդանյանը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԿՈՐՈՒՍՏ...

# Նա շատ մեծ մարդ էր...



*Նորոգ հանգուցյալ Ֆադեյ Սարգսյանի հուղարկավորությանը մասնակցում էր նաեւ Հայերի համաշխարհային կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, որ Մոսկվայից ժամանել էր այդ կապակցությամբ, իր 30 տարվա բարեկամին, ինչպես ինքն ասաց, վերջին հրաժեշտը տալու:*

**«Իսկապես մեծ, շատ մեծ մարդ կորցրեցինք, թաղումից հետո ասաց Արա Աբրահամյանը մեր թղթակցին: Մենք դեռ չենք գիտակցում մեր կորուստը: Ֆադեյ Տաճատիչը իսկական լեգենդ է, նա խորհրդանշում է, Կարեն Սերոբիչի հետ, մեր հանրապետության ամենածաղկուն շրջանը: Ծաղկուն՝ արդյունաբերությամբ, գիտարտադրական մեծագույն նվաճումներով: Նրա դերը առաջնային էր այդ բոլորի մեջ. չկար այնպիսի հարց, որը Կարեն Սերոբիչը դներ նրա առաջ եւ նա չլուծեր լավագույն կերպով: Գիտարտադրական հզորություններ, 7000 աշխատակիցներով ռազմարդյունաբերական գործարաններ, գյուղատնտեսական խոշոր ծրագրեր, սահմանամերձ շրջանների հեռահար զարգացման պլաններ... Նա կոփվել էր Հայրենական մեծ պատերազմի, բլոկադայի կրակներում, հարազատ եղբորն էր կորցրել, հսկայական կամք եւ աշխատասիրություն էր կուտակել, գործ կազմակերպելու հմտություն էր ձեռք բերել, բազմակողմանի զարգացում: Նա իմ ավագ ընկերն էր, մի մարդ, որ մի ողջ սերունդ կրթեց, ճանապարհ բացեց երիտասարդ ու տաղանդավոր գիտնականների ու գործիչների համար: Նա հիմա էլ, իր մահվանից հետո, շարունակում է դաստիարակել մեզ, ճանապարհ ցույց տալ: Այդ իմաստով մենք չունենք մի երկրորդ անուն, որ նրա անվան կողքը դնենք: Եթե ինձ հարց տային, թե ո՞ւմ կուզեի նմանվել, ես առանց վարանելու Ֆադեյ Տաճատիչի անունը կտայի: Ցավոք, երկրորդը չունենք: Նա մի ամբողջ դարի հայոց պատմությունն է խորհրդանշում՝ կոփված տառապանքներում, նպատակասլաց՝ հայրենի պետության հզորացման գործում: Նա, իրոք, շատ մեծ մարդ էր»:**

# Իրացման գոտիներին վերաբերող օրենքի նախագծին՝ բացասական եզրակացություն

**Պատգամավոր Լարիսա Ալավերդյանի ներկայացրած «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին կառավարությունը բացասական եզրակացություն տվեց: Արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանն այս կապակցությամբ այն տեսակետը հայտնեց, որ առաջարկվող փոփոխությունները տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք կտան: Նախագծով առաջարկվող փոփոխությունների թվում էր գերակա շահի գործողության ժամկետը տվյալ տարածքներում սահմանափակելը 2 տարով, այլ ոչ թե 5-ով, ինչպես այժմ է: Սակայն այս դրույթը նույնպես արդարադատության նախարարը անհրաժեշտ համարեց, առանձնապես չմտահոգվելով 5 տարի շարունակ իրացման աշխատանքների սկսվելուն սպասող բնակիչների հոգեվիճակով եւ նրանց իրավունքների սահմանափակումներով:**

# «Արդշինինվեստբանկն», ըստ MoneyGram-ի, ամենահուսալի հայկական բանկն է

**«Արդշինինվեստբանկը», միջազգային դրամական փոխանցումների MoneyGram համակարգի կողմից արժանացել է հավաստագրի՝ որպես ամենահուսալի հայկական բանկ: Այս համակարգը ներկայացված է աշխարհի շուրջ 190 երկրներում եւ ունի 186 հազար սպասարկման կետ: Այս առթիվ «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ Ներսես Կարամանուկյանը նշել է, որ MoneyGram-ի շնորհած հավաստագիրը պարտավորեցնում է բանկին շարունակել մնալ հուսալի եւ վստահելի բանկ ոչ միայն մեր արտերկրի գործընկերների, այլեւ մեր բոլոր հաճախորդների համար: Ա. Մ.**

# Երեք կարեւոր ծրագիր նախարարների համար

Կառավարության այս տարվա առաջին նիստը սկսելուց առաջ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** կառավարության անդամներին ներկայացրեց երկու հանձնարարական: Առաջինը, ըստ նրա, այն է, որ բոլոր նախարարները պետք է իրենց անմիջական հսկողության տակ վերցնեն առնվազն երեք ծրագիր, որոնք ապահովելու են բեկումային զարգացում: «Տարեվերջին նրանք պետք է հաշիվ տան, թե որ ոլորտներում են գրանցել լուրջ առաջընթաց», նշեց նա:

Երկրորդ հանձնարարականը վերաբերում էր տնտեսական աճի ցուցանիշին: «Ամփոփելով 2009թ. արդյունքները, լսելով ձեր հաշվետվությունները՝ մենք պետք է հիմնական շեշտը դնենք այն հանգամանքի վրա, թե ինչ ներուժ է կուտակված եւ ինչ միջոցառումներ պետք է իրականացնենք 2010թ., որոնք կհանգեցնեն տնտեսական աճի ցուցանիշի բարելավմանը, ինչ ռեզերվներ ունենք, ինչ խոչընդոտներ կան, որոնց վերացումը կարող է ապահովել տնտեսական աճ, կամ ինչ կոնկրետ նախագծեր կան, որոնց իրականացումն ապահովելու է այն», ընդգծեց Տիգրան Սարգսյանը:

# Հյուսիս-հարավ ճանապարհի շինանարարությունն՝ այս տարի

**Կառավարությունը երեկ հավանություն տվեց Հյուսիս-հարավ ճանապարհի շինարարության ներդրումային ծրագրին: Այս մայրուղին, որը հնարավորություն կտա բարելավելու Հայաստանի կապը Իրանի եւ Վրաստանի հետ, կընդգրկի Ագարակ-Կապան-Երեւան-Գյումրի-Բավրա մայրուղիները եւ ճանապարհային ենթակառույցները: Ինչպես հայտնեց հարցը ներկայացնող էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, այս տարվա ընթացքում նախատեսված է իրականացնել ծրագրի առաջին փուլը, որը կարժենա 120 մլն դոլար: Ծրագրի ընդհանուր արժեքը 500 մլն դոլար է: Էկոնոմիկայի նախարարը նշեց, որ այս տարի ստացվելիք գումարի 1-ին՝ 60 մլն դոլար բաժնեմասով կկառուցվեն Երեւան Գյումրի ճանապարհի Քարնուղու հատվածը եւ Երեւան-Արարատ ճանապարհի որոշ հատվածներ: Հաջորդը նախատեսվում է կառուցել Սիսիան-Կապան ճանապարհահատվածը: «Իրատեսակա՞ն է այս տարի 120 մլն դոլարի աշխատանքների իրականացումը»՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի հարցին տրանսպորտի եւ կապի նախարար Գուրգեն Սարգսյանը պատասխանեց, որ 60 մլն դոլարի իրականացումը իրատեսական է, իսկ մնացածը կփորձեն հասցնել իրականացնել:**

# Էներգետիկ շահերը՝ պակաս թանկ, քան ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքը

*1-ին էջից*

Նալբանդյանի խոսքերով, այդ հայտարարության տակ նաեւ Ադրբեջանի անունն է գրված: «Խաղաղ լուծմանն այլընտրանք չկա: Նախագահների մակարդակով հանդիպումներն էլ կշարունակվեն, եթե մենք կարողանանք պահպանել նախորդ տարվա դրական դինամիկան», նշել է Հայաստանի արտգործնախարարը:

Սերգեյ Լավրովը համաձայնել է իր գործընկերոջ խոսքերին, որ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում լճացում չի նկատվում:

ՀԱՊԿ շրջանակներում համագործակցության առումով Լավրովն, ի պատասխան հարցի, նշել է, թե Հայաստանն ու Ռուսաստանը աշխատում են այդ շրջանակներում, ակտիվ գործում են նաեւ ձեռք բերված համաձայնությունների իրականացման ուղղությամբ: «Դաներառում է նաեւ ռազմատեխնիկական համագործակցությունը», ավելացրել է Լավրովը, հիշեցնելով, որ երեկ Մոսկվայում հանդիպում էին Հայաստանի եւ Ռուսաստանի պաշտպանության նախարարները:

Հայ-թուրքական հարաբերությունների ու արձանագրությունների թեմայի առնչությամբ Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը նշել է. «Հայաստանը, ինչպես եւ Թուրքիան, պարտավորություն են վերցրել անելու ամեն ինչ, որ այդ արձանագրությունները վավերացվեն խելամիտ ժամկետներում: Վավերացման գործընթացը Հայաստանում ավելի բարդ է, քան Թուրքիայում»:

ՀՀ ԱԳ նախարարի խոսքերով, դեռեւս հոկտեմբերին արձանագրությունները Թուրքիայում ուղարկվել էին խորհրդարան: Իսկ Հայաստանում արդեն Սահմանադրական դատարանում քննարկվել են արձանագրությունները, որի առնչությամբ որոշումը կայացվել է, չնայած, ըստ Նալբանդյանի, ժամկետների առումով ՍԴ-ն կարող էր այդ հարցը քննարկել ընդհուպ փետրվարի վերջ:

Ինչ վերաբերում է Թուրքիայում հայ-թուրքական արձանագրությունների վավերացմանը, ապա Նալբանդյանը հայտարարել է, թե չէր ցանկանա ունենալ այնպիսի տպավորություն, թե Թուրքիան դիտմամբ խոչընդոտում է վավերացման գործընթացին:

«Դա կնշանակի, որ Թուրքիան չի կատարում իր պարտավորույթունը վավերացնելու արձանագրությունները խելամիտ ժամկետներում, ինչն էլ նշանակում է չձգել, չստեղծել արհեստական խոչընդոտներ: Մեր կողմից մենք անում ենք այն, ինչ ընդունված է վավերացման մեր գործընթացում: ՍԴ-ի որոշումը լուրջ ազդանշան է Թուրքիային, որ պետք է կատարել ստանձնած պարտավորությունը», նշել է Նալբանդյանը:

Հայ-թուրքական գործընթացը ղարաբաղյան հարցի հետ կապելու փորձերի առնչությամբ Սերգեյ Լավրովը կրկնել է արդեն իսկ հայտարարված ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի խոսքերը, որ այդ գործընթացները պետք չէ կապակցել: ՌԴ արտգործնախարարի խոսքերով՝ «Մենք որեւէ կապ չենք տեսնում հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման ու ղարաբաղյան հարցի կարգավորման միջեւ, արհեստականորեն այդ հարցերը փոխկապակցելը կոռեկտ չէ, երկու գործընթացներն էլ աջակցության կարիք ունեն: Ու արհեստական պայմաններ առաջ քաշելը ճիշտ չէ»:

Ինչ վերաբերում է ԼՂ հարցի կարգավորմանը, ապա, Լավրովի ներկայացմամբ, Ռուսաստանը կողմ է բանակցությունների միջոցով կողմերի միջեւ համաձայնության ձեռքբերմանը, որ կբավարարի հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների շահերը: «Մենք ելնում ենք նրանից, որ այդ (Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ համաձայնեցված սկզբունքների հիման վրա նախապատրաստելիք-Ա.Հ.) պայմանագրի նախապատրաստման գործընթացում ԼՂ բնակչության դիրքորոշումը չի կարող հաշվի չառնվել: Թե ինչ ձեւով դա կարվի, դեռ պետք է պայմանավորվել, բայց սա ակնհայտ է», նշել է Սերգեյ Լավրովը:

Հարցին, թե արդյոք Թուրքիայի հետ էներգետիկ համագործակցության Ռուսաստանի շահերը կարող են ավելի թա՞նկ լինել, քան ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, իրավունք, որին հասել են Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ժողովուրդները, Լավրովը պատասխանել է. «Պատասխանը պարզ է՝ չեն կարող»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 1/14/2010 10:03 PM Page 1



# Մեր մեղքերը

Նախագահ Սարգսյանը, նշելով անցած նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունների դասերը, ՀՀԿ համագումարում ասել էր, թե ընտրական համակարգերի, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, մամուլի, հավաքների ազատության, մյուս ազատությունների ոչ լիարժեք կայացվածությունն է, որ հնարավորություն է տալիս գլուխ բարձրացնելու չարությանն ու անհանդուրժողականությանը, հանգեցնում հասարակական-քաղաքական ճգնաժամերի, որից դիմակայելու համար պետական, քաղաքական, տնտեսական, հասարակական ինստիտուտների հետագա զարգացմանն ու կայացմանն ուղղված արդյունավետ ջանքեր պետք է գործադրվեն: Մեկուկես ամիս հետո նորից հայացք ձգելով նախագահի ասածին՝ համոզվում ես, որ ոչ ոք առանձնապես դեռ չի ձգտում այդ մարտահրավերի առաջը լրջորեն առնել: Ահավասիկ՝ թիվ 10 ընտրատարածքի ընտրությունները, որտեղ արտացոլվեց մեր հասարակությունում ոսկրացած մտայնությունների ողջ համապատկերը: Հիմա կարող էինք, չէ՞, օրինակելի ընտրություններ ապահովել, մանավանդ որ առանձնապես ընտրողների ակտիվություն չկար, կարող էին, չէ՞, մի նորմալ թեկնածու ունենալ կոալիցիան կամ մերձկոալիցիոն շրջանակները, որը և՛ անուն ունենար, և՛ արժանիք... Բայց չէ, մերոնք անպայման սիրում են համը դուրս բերել, կաստետ ու բիլակ դեմ տալ:

Կարող էին, չէ՞, մեր ծեծուջարդ կազմակերպողները գոնե այս ընտրատարածքում իրենց կապը քաշել-չերեւալ, մանավանդ որ գիտեին, թե միջազգայիններից տղա կանչելու ավանդույթն այստեղ առավել նկատելի է գործելու: Հիմա ես, որպես ՀՀ քաղաքացի, ինձ վիրավորված եմ զգում, որ ԱՄՆ դեսպանատան խոսնակն է խոսում Հայոց խորհրդարանի պատգամավոր ընտրելու գործընթացի բազմաթիվ խախտումներից, ու քիչ է, որ խոսում է, դեռ Հայաստանի իշխանություններին կոչ է անում հետաքննել բոլոր խախտումները, բռնությունների մասին վկայությունները եւ գործեր հարուցել բռնություն իրականացնողների հանդեպ, եւ դեռ մի բան էլ հորդորում է՝ դիտարկել վերահաշվարկ իրականացվող տեղամասերում արդյունքները չեղյալ հայտարարելու հարցը: Լավ, Հայաստանն ինքնուրույն չի կարող ընտրակեղծիք ու խախտում հայտնաբերել, որ ով ասես նրան խորհուրդ է տալիս: Հայաստանն անկախ պետություն է, չի՞ կարող ինքնուրույն թացը չորից զատել, կամ մի ընտրատարածքում էլ նորմալ ընտրություն չի՞ կարող անցկացնել, որ դա հորդորում են մեր ամերիկացի բարեկամները: Բա որ մենք էլ վերցնենք ու նրանց խորհուրդ տանք, թե ոնց կոնգրեսական ընտրեն: Բայց դե մենք սովոր ենք «զագրանիչնի» զանազան ֆեռիների խորհուրդները լսել, այս մեկին էլ կդիմանանք: Անցանք առաջ:

Երթուղային տաքսու վարորդը, որը հազիվ փախցրեց մեքենան անպատելի դեմը կտրած ջիպից, բացտրում-արդարանում էր. «Հիմա ամեն ինչ կապել են փողին՝ փող կա, ինչ վատ բան ուզում ես արա, փողը կտաս-տակից դուրս կգաս, բոլոր դեպքերում մեղավորը մենք կլինենք: Այնպես որ՝ որիշները խախտում են-չեն խախտում, մեզ հետ կապ չունի, մենք աշխատում ենք հեռու մնալ այդ թանկարժեք մեքենատերերից, ու երթուղի դուրս գալիս ոչ միայն պիտի կարգը պահելով մտահոգվենք, այլեւ աշխատենք կարգ խախտող փողատերերի հետ չառնչվել, լեզու չքրքել»: Որ մտածում ես՝ սարսափելի բան էր ասում այդ վարորդը. այսինքն՝ Երեւանի փողոցներում ոչ ոք վստահ չէ իր կյանքի համար, քանի որ անպատժելիների համար «խախտում» բառը, որը պատասխանատվության ենթարկում է ենթադրում, ոչինչ չի նշանակում, եւ ինչպես տվյալ վարորդն էր շատ սուղ մտապահում արել դպրոցական դասագրքերից՝ «ուժեղի մոտ միշտ էլ թույլն է մեղավոր»: Տեսա՞ք ընտրախախտումից մինչեւ փողոցային երթեւեկության խախտում կապը

Կամ ասենք՝ ի՞նչն է խանգարում, որ գոնե լրագրողական շրջանակում բանիմաց մարդկանց ներդնեն հասարակական շփման համար. հասկացանք՝ գիտելիքը, որպես այդպիսին, մեր ժամանակներում պահանջարկված չէ, այլ՝ փողը, կապերը, «պապան»: Բայց տեղ-տեղ գիտելիքը, կամ լավ, եթե գիտելիք չկա, գոնե իրազեկված լինելը, հեր օրհնած, դեռ պետք է: Օրինակ՝ հենց երեկ «Արցախ» ակումբում կարելի էր ողջ լրագրողական կորպուսի անունից գետինը մտնել վարողի մի շարք մտքերից: Ահավասիկ. «Հարգելի լրագրողներ, այսօր մեր հյուրն է Հայ հեղափոխական դաշնակցության ազգային խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանը»: Եվ սա դեռ ոչինչ, հապա հարցը. «Պարո՛ն Հովհաննիսյան, ի՞նչ կանի Դաշնակցությունը, եթե Սահմանադրական դատարանը ստորագրի արձանագրությունները»: Հըը: «Փող կա, խելք պետք չէ». կարծես մերոնք այս հումորի փոխաբերությունը չեն ընկալում, ուղիղ իմաստով են հասկանում եւ գործողության մեջ դնում:



Ահա այսպես ամեն օր աջուձախից մեզ ճնշում է տեղեկությունների հոսքը՝ մեր կյանքի բազմաթիվ անկատարությունների մասին, որոնց հեղինակը և՛ հայ մարդն է, և՛ համակարգային շիլաշփոթը, և՛ դեպի լավը չփոխվելու մեր հաստատակամությունը, և՛ բազմաթիվ այլ գործոններ, որոնք փոխելու համար միայն բանավոր արտաբերվող խոսքը քիչ է, շատ քիչ, շատուշատ քիչ...

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Հայաստանին ուղղված լուրջ մարտահրավեր

Քաղաքագետ **Ստեփան Գրիգորյանը** մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձավ Հայաստան-Թուրքիա արձանագրությունների սահմանադրականության վավերացմանը, ինչպես նաեւ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի Մոսկվա եւ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովի Հայաստան այցելություններին:

«Այս այցելությունները ոչ մի այլ հարցի հետ կապ չունեն, բացառությամբ Ղարաբաղի հարցի: Թուրքիայի վարչապետը Մոսկվայում խոսել է միայն Ղարաբաղի հարցի մասին, եւ Սերգեյ Լավրովն էլ Հայաստանում կխոսի միայն այդ մասին: Թուրքիան ունի շատ լուրջ պետական ինստիտուտներ եւ քաղաքական պատմական հիշողություն, Թուրքիան միշտ ճգնաժամերի ժամանակ լուծում էր հարցերը Հարավային Կովկասում Ռուսաստանի միջոցով, եւ միշտ պարտվում էր հայերին ռազմական դաշտում, բայց հետո դիվանագիտական դաշտում լուծում էր իր հարցերը Ռուսաստանի միջոցով, ու հիմա փորձ է արվում նույն մեխանիզմը կիրառել», ասաց քաղաքագետը:

Այս անգամ պատերազմում պարտվածն Ադրբեջանն է, եւ նրանք ուզում են՝ հօգուտ պարտված կողմի լուծել հարցերը Ռուսաստանի միջոցով, քանի որ Ռուսաստանը մեծ ազդեցություն ունի տարածաշրջանում: Օրինակ՝ Ադրբեջանը պատրաստ է իր նավթն ու գազն անցկացնել Եվրոպա Ռուսաստանի տարածքով: Ըստ քաղաքագետի՝ Թուրքիայի մշակած սխեման շատ պարզունակ է՝ ճնշել Հայաստանին, որպեսզի Ղարաբաղի հարցում գնա լուրջ զիջումների:

Ստեփան Գրիգորյանը հավելեց, որ Ռուսաստանը չի կարող լուծել իր՝ էներգետիկ դաշտում կենսական նշանակության հարցերը հայ ժողովրդի տարածքների հաշվին, եւ եթե ուզում է Թուրքիային լավություն անել, թող անի իր տարածքներով: Այնպես որ ոչ ոք չի կարող Ղարաբաղի հարցը բերել հայ-թուրքական բանակցային գործընթացի մեջ:

«Այստեղ մենք ունենք երկու լուրջ հակառակորդ, առաջինը Թուրքիան է, ինչը շատ նորմալ է, այո, Թուրքիան պայքարում է, որ կարողանա կորզել ավելին, իսկ երկրորդ հակառակորդը Հայաստանի Ազգային ժողովն է: Այն, որ ԱԺ-ն արագ չի վավերացնում արձանագրությունները եւ դուրս չի բերում Հայաստանն այդ գործընթացից, արդեն բերում է նրան, որ այն ուժերը, որոնք դեմ են, որ հայ-թուրքական հարաբերությունները բարելավվեն, ու այն ուժերը, որոնք ուզում են կապել Ղարաբաղի հարցը հայ-թուրքականի հետ, մեր ԱԺ-ի կողմից հնարավորություն ու ժամանակ են ստանում», ասաց քաղաքագետը:

Նրա կարծիքով՝ շատ տրամաբանական է, որ սահմանը բացվի, եւ շատ լավ է, որ Սահմանադրական դատարանը վավերացրեց արձանագրությունների սահմանադրականությունը, Թուրքիան էլ ի վերջո վավերացնելու է, բայց ուզում է մեծ օգուտով դուրս գալ, սակայն մեր քաղաքականությունը շատ կոշտ պետք է լինի: Մենք իրավունք չունենք թույլ տալու Ղարաբաղը կապել հայ- թուրքական հարաբերությունների հետ: Գլխավոր մարտահրավերներն ու սպառնալիքներն ուղղված հայ ժողովրդին կլինեն մինչեւ ապրիլի 24-ը: Քաղաքագետն Էրդողանի եւ Լավրովի այցելությունները որակեց որպես լուրջ մարտահրավերներ եւ կանխատեսեց, որ շատ կարճ ժամանակահատվածում դեռ սպասվում են բուռն զարգացումներ, ինչը շատ բնական է:

«Սա նշանակում է, որ մենք դառնում ենք պետություն, որի հետ ինչ-որ չափով հաշվի են նստում, եւ լավ կլինի, որ մեր բոլոր քաղաքական ուժերն ու փորձագետներն ասեն իրենց կարծիքը, որ մենք իմանանք՝ ով ինչ դիրքորոշում ունի, ավելի ճիշտ՝ ով ով է այս երկրում», նշեց Ստեփան Գրիգորյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Արա Սիմոնյանը վերջը դարձավ պատգամավոր

**Երեւանի թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը երեկ որոշում է կայացրել Արա Սիմոնյանին մեծամասնական կարգով պատգամավոր գրանցելու մասին: Հանձնաժողովի անդամներից որոշմանը կողմ է եղել 6-ը, իսկ դեմ է եղել ՀՅԴ ներկայացուցիչը, որը չի ստորագրել արձանագրությունը: ԸԸՀ-ն քննարկել է նաեւ ստացված դիմում բողոքները՝ 10/15, 10/19 տեղամասերի քվեարկության արդյունքները Նիկոլ Փաշինյանի վստահված անձանց դիմումների հիման վրա ստուգվելով՝ անվավեր են ճանաչվել, որոնց վերաբերյալ նյութերն ուղարկվելու են դատախազություն:**

# Կենտրոնական բանկը ստեղծել է նոր կայք եւ ուսուցողական ֆիլմ

**Կենտրոնական բանկը ստեղծել է ֆինանսական ոլորտի ծառայություններ սպառողների համար ինտերնետային կայք, որը հունվարի 1-ից հանրությանը հասանելի է www.abcfinance.am էլեկտրոնային հասցեով: Այցելելով կայք՝ սպառողը կգտնի ֆինանսների վերաբերյալ պարզ եւ մատչելի շարադրված տեղեկատվություն եւ կստանա իրեն հուզող հարցերի պատասխանները:**

**Կայքը, ինչպես նաեւ «Վճարային քարտի մասին» ուսուցողական ֆիլմը երեկ ներկայացվեցին Կենտրոնական բանկում:** Ա. Ս.

# Դաշնակցությունը կպայքարի, որ ՍԴ-ի որոշումը բոբիկ ու անտեր չմնա

Թեպետ Դաշնակցության պայքարի նպատակն էր, որ ՍԴ-ն հայ-թուրքական արձանագրությունները սահմանադրությանը համապատասխանող չճանաչի, բայց, ըստ **Վահան Հովհաննիսյանի**, այն հանգամանքները, որ ներկայացրել է ՍԴ-ն, ոչ միայն լիարժեք հնարավորություն են տալիս, այլեւ պարտադրում են ՀՀ-ին հետագա բոլոր ընթացակարգերը արձանագրությունների վերաբերյալ կատարել միայն վճռի համաձայն: ՀՅԴ բյուրոյի անդամը նշում է, որ իրենց հարցադրմանը տրվել են հստակ պատասխաններ: Դաշնակցությանն առաջնահերթ մտահոգում էր արձանագրությունների առարկան, քանի որ դրանք լիարժեք միջազգային պայմանագրի ուժ ունեն: «Պատասխանը հստակ էր՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատում եւ սահմանների բացում: Մնացյալը ածանցյալ են, հետագա զարգացման պարագայում պետք է նոր պայմանագրեր ստեղծվեն եւ անցնեն ՍԴ-ի բովով: Հստակ ասված էր, որ արձանագրություններն առնչություն չունեն երրորդ երկրների հետ, որեւէ կասկած, որ Արցախի հարցը կամ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը կարող է փոխկապակցվել հայ-թուրքական հարաբերությունների հետ, հանված է: ՀՀ-ն պարտավոր է հետագա գործողություններում հաշվի առնել սահմանադրության 11-րդ հոդվածը եւ դրանց հիմք հանդիսացած անկախության հռչակագիրը, որտեղ հստակ խոսվում է Արեւմտյան Հայաստանի, ցեղասպանության ճանաչման մասին: ՀՀ որեւէ ատյան որեւէ հանձնաժողովում չի կարող քննարկման առարկա դարձնել ցեղասպանության խնդիրը», ասում է Հովհաննիսյանը:

ՀՅԴ ԱԺ խմբակցության ղեկավարին չի բավարարել սահմանների ճանաչման վերաբերյալ ՍԴ-ի բացատրությունը, սակայն այս առումով էլ հուսադրող կետեր կան:

«Սահմանի ճանաչումը ոչ թե արձանագրություններով, այլ միջազգային ուժ ունեցող երկկողմ պայմանագրերով պետք է ճանաչվի: Նման պայմանագրեր չկան: Սահմանի հարցը մնում է բաց, մի քիչ բարդ բացատրություն է տրվել, դե ծանոթ ենք ՍԴ-ի փաստաթղթերի ոճին, բայց նույնիսկ այս պարագայում կան բավարար նախադրյալներ հետագա աշխատանքի համար»:

Վահան Հովհաննիսյանը ողջունում է, որ ՍԴ-ն ընդունեց իրենց նշած վտանգներն՝ ու բարկանում է, որ շատ քաղաքական ուժեր ու գործիչներ ասում են՝ տեսա՞ք, մենք էլ էինք դա ասում: «Ի՞նչ էիք ասում: Դուք ասում էիք մեջը նախապայմաններ չկան, ՍԴ-ն հստակ տարանջատեց, որ կան նախապայմաններ, որոնք մեզ համար ուժ չունեն»:

Մինչ մի շարք քաղաքական դեմքեր բավարարվում են ՍԴ-ի որոշմամբ, ոմանք կասկածանքով վերաբերվում, շատերն էլ իրենց պատեպատ ծեփում, ՀՅԴ-ն չի հուսահատվում. քանի որ ՍԴ-ի որոշումը իրավական ուժ ունի ՀՀ-ի համար, միջազգային իմաստով ուժ կստանա միայն ԱԺ-ի վավերացումից հետո: Հենց այդ պատճառով Դաշնակցության պայքարի հաջորդ հանգրվանը ԱԺ-ն է: «Պայքարը ոչ թե ՍԴ-ի տեքստն է, այլ որ չմնա այսպես բոբիկ, անտեր եւ իր նշանակությունը չկորցնի»:

Դաշնակցականները ցանկանում են, որ փաստաթուղթն ընդհանրապես մերժեն, բայց եթե դա հնարավոր չէ, ապա վավերացնեն միայն վերապահումներով:

Քանի որ վերապահման իրավունքի հնարավորություն ունի միայն գործադիր իշխանությունը, ապա Վահան Հովհաննիսյանն առաջարկում է, որ վերապահումներ կատարի ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Հակառակ դեպքում օրենքը փոխվի, եւ ԱԺ-ն ունենա վերապահումներ անելու իրավունք, ինչը նաեւ կթուլացնի արտաքին ճնշումները նախագահի վրա:

Թե երբ արձանագրությունները կուղարկվեն ԱԺ, Վահան Հովհաննիսյանը հստակ չի կարող ասել:

Խորհրդարանում Դաշնակցությունը ոչ միայն գնալու է անհատ պատգամավորների խղճի վրա ազդելու ճանապարհով, այլեւ պայքարելու է, որ նրանց կուսակցական գիծը համապատասխանի իրենց առաջարկին: Կոալիցիոն գործընկերների աջակցությունը ստանալու վերաբերյալ Հովհաննիսյանն ասաց, որ վիճակն անհույս չէ:

Վերջին շրջանում կոալիցիա վերադառնալու մասին հարցը միայն Վահան Հովհաննիսյանին ուղղել են, իր խոսքերով, 42 անգամ: 43-րդ անգամ նա ասաց, որ եթե արձանագրությունները վավերացվեն նույնիսկ վերապահումներով, ապա իրենք կոալիցիա չեն վերադառնա: Նա նաեւ զարմացավ, որ այդ հարցն այդքան մտահոգում է հասարակությանը. «Բանավիճելու ուրիշ թեմաներ չկա՞ն»:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 1/14/2010 10:03 PM Page 1



# ՌԱԿ-ի անկախութիւնը գերիվեր

*Ստորեւ նույնությամբ, առանց ուղղումների, հրատարակում ենք ՌԱԿ Կալիֆոռնիայի պաշտոնաթերթ «Նոր օր» շաբաթաթերթի խմբագրի հոդվածը, իսկ կողքին՝ «Ազգ»-ի խմբագրի անդրադարձը՝ շատ ավելի լայն՝ հայության այսօրվա գլխավոր խնդիրների ընդգրկումով: - Խմբ.*

Դոկտ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

ՌԱԿ-ը հիմնուեցաւ որպէս ազատական եւ ժողովրդարական (դեմոկրատական) ուժերու արտայայտիչ կուսակցութիւն մը՝ սերտօրէն կապուած 1885-ին, հայոց առաջին մայրաքաղաք Վան Տոսպի մէջ հիմնուած Արմենական Կուսակցութեան:

Օսմանեան Թուրքիոյ մէջ, 1890-ականներէն մինչեւ յետ-Առաջին Համաշխարհային Պատերազմի ընթացքին ծաւալած արիւնալի ու եղեռնական անցուդարձերը, ՌԱԿ-ի բաղադրութեան մաս կազմող մտաւորականութիւնն ու զինեալ պայքարի մէջ ալ փայլած խմբակներն ու անհատները որդեգրեցին կարգ մը սկզբունքներ, ինչպէս ` չափաւորութիւն, հանդուրժողականութիւն, «ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ», Հայրենիքի կողքին, Ս. Էջմիածնին սատար եւ ինքնուրոյն ու անկախ աշխարհայեացք:

Առաջին Հանրապետութեան (1918-1920), Բ. (կամ Խորհրդային) Հանրապետութեան (1920-1921) տարիներուն, երբ երկուքին խորհրդարաններուն ու կառավարութիւններուն մէջ զգալի տիրապետութիւն մը կար ՀՅԴ-ի եւ ապա համայնավարներու, ՌԱԿ-ը բաղկացնող անդամներն ու խմբակցութիւնները սատար կեցան անսակարկ հայրենասիրութեամբ, բայց միշտ պահելով ռամկավար ազատականի դիմագիծը՝ գործակցիլ եւ աջակցիլ յանուն հայրենակերտումի, բայց առանց հլու հնազանդ կամակատարը («Այո՛, պարոն»- եսմէն) եւ կամ թունդ հակառակորդը դառնալու տիրող իշխանութեան:

Ըլլալ հայրենի տիրող իշխանութեան կամ գերագոյն վարչութեան կողքին՝ չի նշանակեր կորսնցնել ազատ խօսելու եւ կամ քննադատաբար մօտենալու իրաւունքը ու յանդգնիշը: Գործակցիլ բնա՛ւ չի նշանակեր հովանաւորութիւն եւ աւելի հզօրին անութին տակ մտնելով պաշտպանութիւն վայելել (գուցէ ժամանակաւորապէս), քաղաքական երազներ հիւսել ու նկրտումներ ունենալ քաղաքականութեան մէջ աւելի բարձր հարթակներ բարձրանալու:

ՌԱԿ-ի ականաւոր դէմքերէն ոմանք, որոնց յաճախ կը դիմենք եւ կամ կը վկայակոչենք ստեղ-ստեղ, գործակցելով Խորհրդային Հայաստանի առաւելաբար մշակութային կազմակերպութիւններու կամ կոմիտէներու հետ եւ կամ նոյնիսկ քաղաքական այն գործիչներուն հետ Կենտկոմէն ներս, ղեկավարներ, որոնց մէջ շեշտուած էին հայրենասիրութիւնն ու հայրենիքի շահերը ամէն բանէ վեր համոզմունքը, ՌԱԿ-ի ղեկավարները քաղաքական ուղղութիւն կամ հրամաններ չստացան: ՌԱԿ-ը ամէնուր փորձեց պաշտպանել իր ռամկավար ազատականի դիմագիծը: Այլ խօսքով՝ չդարձաւ գործիք կամ ցատքահարթակ ուրիշներու համար:

Ցաւօք, այս աւանդութեան խախտումի նշաններ կը տեսնենք նորաստեղծ ու ինքնայորջորջ ԱՌԱԿ-ի (Արմենական-Ռամկավար...) գոյառման պահէն սկսեալ եւ յաջորդող ամիսներու գործունէութեանց ու յայտարարութեանց մէջ:

Լաւագոյն ապացոյցը մեր ըսածին կարելի է նկատել Հայաստան-Թուրքիա նախահամաձայնութեան ստորագրման առթիւ բարձրացած տագնապի ահազանգներուն ու քննարկումներուն ընթացքին ԱՌԱԿ-ի ըրած արտայայտութիւնները: Մինչ լրջօրէն զգալի հատուած մը (մեր տեսած հարցախոյզներու հիման վրայ) տագնապած է փրոթոքոլներու կարգ մը կէտերու՝ ապագային հասցնելիք հնարաւոր վնասներուն առնչութեամբ, ԱՌԱԿ-ը հլու-հնազանդ կը կրկնէ նախագահի ու անոր վարչութեան ինքնավստահ յայտարարութիւնները:

Մինչ սփիւռքի տարածքին քիչ չեն այն մասնագէտները, որոնք փաստերով կը խօսին հասցուելիք հարուածներուն մասին, ԱՌԱԿ-ը, կարծես ոչինչ ունի քննարկելիք, ոչ ալ սեփական կարծիք ու անվերապահօրէն կը թութակէ:

Թող ներուի ըսել թէ «մէկ մարդու պէս» այս ոճը կը յիշեցնէ այն օրերը, երբ ժողովուրդի ձայներուն 98 տոկոսով կընտրուէր «դեպուտատը» (երեսփոխան, ներկայացուցիչ), իսկ կենտկոմի մէջ՝ Գլխաւոր Քարտուղարը:

Մենք կը փորձենք հասկնալ թէ ինքզինք «իսկական ռամկավար կուսակցութիւն» նկատող (իսկ միւսները՝ մենք, ապօրէն) խմբակը կուզէ ցոյց տալ իր նեցուկը Հայաստանի կառավարութեան ու զայն գլխաւորող նախագահին, որովհետեւ իրօք որ Հայաստանի այրերը պէտք ունին նման խմբակներու, որովհետեւ իսկապէս նեղի դրուած են անոնք, բայց այդ բոլորը նորէն կարելի է ընել առանց անգոյն ու անդիմագիծ կեցուածքի, որ բնա՛ւ յարիր չէ իսկական ՌԱԿ-ին՝ ՄԵՐ գիտցած ՌԱԿ-ին:

Լոս Անճելըս

«Նոր Օր», 7 դեկտ. 2009

# Նամակ՝ «Նոր օր» թերթի խմբագիր Մինաս Գոճայեանին

Սիրելի Մինաս,

Իսկապէս խղճահարութիւն զգացի քեզի հանդէպ, երբ իմացայ նախագահ Սերժ Սարգսեանի հետ լոսանճելըսեան հանդիպման ժամանակ քու պարզամիտ հարցադրումիդ մասին: Ըստ ինծի պատմուածներուն, երբ արտաճմլիկ հարց տուեր ես Սերժ Սարգսեանին, թէ այսքան տարի Ցեղասպանութեան մասին կը քարոզես աշակերտներուդ, եւ հիմա որ Արձանագրութիւններու հարցը ելաւ մէջտեղ՝ ի՞նչ պիտի սորվեցնես անոնց, նախագահը պարզապէս ըսեր է քեզի՝ «շարունակէք նոյնը անել, նո՛ր թափով»:

Անշուշտ կարելի չէ ակնկալել, որ մեր բոլոր խմբագիրները, մանաւանդ Սփիւռքի պայմաններուն մէջ, քաղաքագէտ ըլլան: Սակայն common sense-ը միշտ պէտք է, նոյնիսկ մամուլի աստարէզ պատահաբար յայտնուածներուն համար: Այդ պահուն չմտածեցի՞ր, թէ ո՞վ կրնայ արգիլել քեզի, ինծի կամ միւսին, որպէսզի շարունակենք Ցեղասպանութեան ճանաչումի գործը: Չմտածեցի՞ր, որ այժմ, Փրոթոքոլները վաւերացուին թէ ոչ, նոր ասպարէզ կրնայ բացուիլ աւելի գործնականօրէն մեր պահանջատիրութիւնը հետապնդելու: Վերջապէս՝ ի՞նչ կ'արժէ ամբողջ աշխարհի երկիրներուն կողմէ Ցեղասպանութեան ճանաչումը, եթէ Թուրքիան պիտի շարունակէ ուրանալ իր գործած Ոճիրը: Միամի՞տ ես այնքան կարծելու, թէ, օրինակ, Մ. Նահանգներու նախագահի՝ Ցեղասպանություն բառն արտասանելու պարագային ամէն բան պիտի փոխուի եւ Թուրքիան սարսափած պիտի ընդունի իր Յանցանքը: Նախագահ Ռիկըն չճանչցա՞ւ միթէ, այն ալ երկու անգամ...

Դուն եւ քեզի պէս մտածողները ե՞րբ պիտի ազատիք սովորամոլութենէն, միտքի ամլութենէն: Բողոքի ցոյցերը, որոնք ընդամէնը մէկ փոքրիկ եւ օգտակար մասնիկը կրնան կազմել ժամանակակից քաղաքական պայքարի մեր զինանոցին, աւելի շատ կը նպաստեն մեր ազգային ինքնագիտակցման՝ քան թուրքը ծունկի բերելուն...

Որպէսզի ըսածներս աւելի լաւ հասկնաս, սիրելի Մինաս, կը խնդրեմ դուն քեզի, առանձնութեանդ մէջ, փորձ մը ըրէ մեր Պահանջատիրութիւնը բանաձեւելու, կէտ առ կէտ անոր յաջորդական հանգրուանները նշելու՝ կեդրոնանալով իւրաքանչիւր հանգրուանի արդիւնաւորումին համար անհրաժեշտ միջոցներուն վրայ: Իսկապէս, Ճանաչումէն անդին ի՞նչ պիտի ուզենք Թուրքիայէն. հայրենական տարածքներու վերադա՞րձ, որքա՞ն տարածք, այդ հողերու վրայ ապրողներո՞վ, թէ՞ առանց անոնց, մե՞նք պիտի ապրինք այդ հողերուն վրայ, թէ՞ ուրիշներ, պետական-միջազգային ինչպիսի՞ կարգավիճակով: Գուցէ պիտի բաւարարուինք նիւթակա՞ն հատուցումով: Ո՞վ եւ ի՞նչպէս պիտի որոշէ 1,5 միլիոնին արեան գինը, անոնց անշարժ եւ շարժական գոյքին արժէքը, ո՞ր դատարանին մէջ պիտի վճռուի, որո՞ւն պիտի վճարուի: Իսկ ի՞նչ պիտի ըլլայ Կիլիկիան, դուն պիտի վրադառնա՞ս Տէօրթ Եոլ, պապենական հողերուդ, իսկ ես՝ Ատանա կամ Կեսարիա... Եւ կամ, գուցէ, պիտի պահանջենք երկո՞ւքն ալ՝ թէ՛ հողերը եւ՛ թէ նիւթական հատուցումը...

Իսկ եթէ մերժեն, ինչը անպայման պիտի պատահի, ի՞նչ պիտի ըլլայ մեր դիրքը. պատերա՞զմ պիտի յայտարարենք թուրքին, ո՞վ պիտի կռուի, մե՞նք, թէ՞ ուրիշներ՝ մեզի համար, ամերիկահայերդ պիտի մասնակցի՞ք կռիւին...

Կը տեսնե՞ս որքան հարցեր ու հարցականներ կան: Թապուները քանդելու ժամանակն է: Եւ երբ աւարտես մտաւոր այդ գործողութիւնը, վստահ եղիր, որ եզրայանգումդ պիտի ըլլայ մէկը եւ միայն մէկը - պէտք է զօրանայ Հայաստանի Հանրապետութիւնը: Միայն հզօր եւ բարգաւաճ ազգային պետականութեան միջոցով կրնայ հայ ժողովուրդը լուծել, գէթ մասամբ, իր ազգային խնդիրները, իսկ եթէ կ'ուզես՝ Հայ դատը: Իսկ հզօրանալու եւ բարգաւաճելու համար մեր երկիրը պէտք է խուսափի թշնամական յարաբերութիւններէ իր որեւէ դրացիի հետ: Առաջին հերթին՝ ռազմական բախումներէ: (Այո՛, ներկայ վիճակին շարունակումը անխուսափելիօրէն կ'ենթադրէ ռազմական բախում): Ներկայ վիճակին մէջ Հայկական պետութեան գլխաւոր առաջնահերթութիւնը Թուրքիոյ հետ հին հարցերը լուծելը չէ, այլ Ղարաբաղեան հարցին արդար լուծումը: Մնացեալ բոլոր հարցերը ստորադասուած են անոր, առայժմ: Իսկ Թուրքիոյ հետ վերաբացուած սահմաններ ունենալը ոչ միայն տնտեսական, այլեւ ռազմաքաղաքական մեծագոյն նշանակութիւն ունի մեզի համար՝ կոտրել շրջափակման սեղմօղակը ա՛յդ կողմէն, թեթեւցնել ճնշումը մեր երկրին վրայէն եւ այնուհետեւ աւելի նպաստաւոր դիրքերէ ձգտիլ լուծել Արցախեան թնճուկը: Թէեւ, պէտք է խոստովանիլ, ոչ ոք կրնայ երաշխաւորել, որ Թուրքիան պիտի վաւերացնէ Արձանագրութիւնները եւ պիտի բանայ սահմանը...

Մինչ այդ, ոչ ոք իրաւունք ունի, նոյնիսկ Սփիւռքը, Հայաստանի ժողովուրդին ըսելու՝ 17 տարի ապրեցաք այսպէս, շրջափակման պայմաններուն մէջ, շարունակեցէք եւս 100 տարի (Վ. Օսկանեանին խօսքը յիշեցի): Ապրելու եւ ապրուստի որակ ըսուած բան մը կայ աշխարհի մէջ, որ ուղիղ համեմատական է երկրին զարգացման որակին հետ: Ասիկա լաւ գիտէք մանաւանդ Ամերիկայի մէջ ապրողներդ: Մեր կարեւորագոյն խնդիրն է մեր երիտասարդութեան համար պայմաններ ստեղծելը, որպէսզի ան չմտածէ երկրէն հեռանալու, իր ապագան այլ երկրի մէջ տեսնելու մասին: Կրնա՞յ որեւէ երկիր ապագայ ունենալ, եթէ նորաւարտ բժիշկը, օրինակ, 9 տարի ուսանելէ ու մասնագիտանալէ ետք, ընդամէնը ամսական 32000 դրամ (շուրջ 80 տոլար) կը ստանայ հիւանդանոցին կամ դարմանատան մէջ, հետեւաբար ստիպուած է կողոպտելու իր հիւանդները: Կրնա՞յ որեւէ զօրակոչիկ հաճոյքով ծառայել իր ազգային բանակին մէջ, եթէ օրական ճաշաբաժինը ընդամէնը 1000 դրամ կը կազմէ (մօտ 3 տոլար): Այս պայմաններուն մէջ եւ այսպէս շարունակուելու պարագային անխուսափելիօրէն պիտի ունենանք եւ ունինք կացութենէն օգտուող մենաշնորհեալներ, կաշառակեր պաշտօնեաներ, իշխանութիւն դարձած մեծահարուստներ եւ մեծահարուստ դարձած իշխանութիւններ, անարդար դատաւորներ ու դատարաններ, խանութի վերածուած դպրոցներ ու համալսարաններ, եւ վերջապէս՝ 5 հազար դրամով իրենց քուէն որեւէ թեկնածուի համար ծախու հանելու պատրաստ հարիւր հազարաւոր քաղաքացիներ եւ անոնցմէ ծնած իշխանութիւններ:

Այս երկար բացատրութիւններուս դրդապատճառը, սիրելի Մինաս, 2009 Դեկտ. 7-ին «Նոր Օր»ի մէջ ստորագրուած՝ «ՌԱԿ-ի անկախութիւնը՝ գերիվեր» պոռոտ վերնագրով յօդուածդ է, զոր օրերս միայն առիթ ունեցայ կարդալու: Կը մեղադրես Արմենական-ՌԱԿ-ը Հայաստանի իշխանութիւններուն «հլու-հնազանդ կամակատարը» ըլլալու մէջ, փորձելով նաեւ դաս տալ, որ «հայրենի տիրող իշխանութեան կամ Գերագոյն վարչութեան կողքին» ըլլալը «չի նշանակեր կորսնցնել ազատ խօսելու եւ քննադատաբար մօտենալու իրաւունքը եւ յանդգնիշը», միաժամանակ փորձելով վկայակոչել ՌԱԿ-ի նախկին ղեկավարութեան՝ «ականաւոր դէմքերէն ոմանց» գործակցութիւնը Խ. Հայաստանի ղեկավարութեան հետ, պնդելով որ, այնուամենայնիւ, անոնք քաղաքական ուղղութիւն կամ հրամաններ չստացան խորհրդահայ ղեկավարութենէն, մինչդեռ Արմենական-ՌԱԿ-ը միայն այդ կ'ընէ, յատկապէս Հայաստան-Թուրքիա հարցին առնչութեամբ:

Հոս չեմ ուզեր նեղ դրութեան մատնել քեզ, հետեւաբար «ազատ խօսելու եւ քննադատաբար մօտենալու իրաւունքդ» խնդրոյ առարկայ դարձնելով քեզմէ պիտի չպահանջեմ տալ այս նամակս: Չեմ ուզեր խօսիլ նաեւ ՌԱԿ նախկին ղեկավարութեան՝ Խ. Հայաստանի ատենի ղեկեվարութենէն ստացած կամ չստացած, կատարած կամ չկատարած «հրամաններուն» մասին: Ատիկա շատ երկար նիւթ է եւ առանձին անդրադարձ կը պահանջէ: Սակայն չեմ կրնար չմատնանշել ՌԱԿ Համաշխարհային Խորհուրդին եւ յատկապէս Արմենական-ՌԱԿ-ի՝ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու շուրջ հրապարակած՝ թիւով 5 յայտարարութիւնները, զորս ապահովաբար չես կարդացած, բայց բանասիրական գիտութիւններու դոկտոր սեպուելով հանդերձ ինքզինքդ թոյլ կուտաս առանց կարդալու նախապատրաստուած կարծիք յայտնել: Եթէ զանոնք կարդացած ըլլայիր, պիտի նկատէիր, որ անոնցմէ ամէն մէկուն մէջ խոր մտահոգութիւն մը, լուրջ վերապահութիւն մը եւ, ամենակարեւորը, Փրոթոքոլներու հնարաւոր անպատեհութիւնները կանխելու խելամիտ առաջարկներ կան, որոնց մասին, միշտ միտքի ծուլութեան հետեւանքով, դժբախտաբար ոչ դուն եւ ոչ ալ որպէս «ղեկավար» ընդունած մարդիկդ չէք մտածած անգամ: Եթէ այդ յայտարարութիւններով արտայայտուած մտավախութիւններուն, մտահոգութիւններուն, հակասութիւններու մատնանշումներուն ծանօթ ըլլայիր, սուտ խօսելու փորձութեան պիտի չենթարկէիր ինքզինքդ եւ բնաւ պիտի չբարբառէիր գոռոզամտութեամբ. «Մինչ սփիւռքի տարածքին քիչ չեն այն մասնագէտները, որոնք փաստերով կը խօսին (փրոթոքոլներու ընդունմամբ- Յ. Ա.) հասցուելիք հարուածներուն մասին, ԱՌԱԿ-ը, կարծես ոչինչ ունի քննելիք, ոչ ալ սեփական կարծիք, անվերապահօրէն կը թութակէ»:

Յամենայնդէպս, եթէ յիշեալ յայտարարութիւնները չես ուզեր կարդալ, քու գիտնալիքդ է: Սակայն եթէ այսուհետեւ հայ-թրքական յարաբերութիւններուն մասին գրիչ շարժելու կամ ձայն բարձրացնելու ըլլաս, բարի եղիր նա՛խ ծանօթանալու ՌԱԿ հիմնադիր ղեկավար եւ պայծառագոյն մտածող Վահան Թէքէեանի 1931-ին «Արեւ»ի մէջ հրատարակած յօդուածաշարքը «Հայ եւ թուրք յարաբերութիւններ» վերնագրով, որ վերջերս վերահրատարակուեցաւ նաեւ «Ազգ»ի 2009 նոյեմբեր 7-ի թիւին մէջ: Եթէ պահ մը զգաստանաս եւ սկսիս սեփական ուղեղովդ մտածել, դուն ալ ինծի պէս պիտի խոստովանիս, որ մեր կուսակցութիւնը՝ ՌԱԿ-ը, երբեք չկրցաւ հասնիլ իր հիմնադիրին 80 տարի առաջ արտայայտած այդ մտածողութեան բարձունքին, չունեցաւ եւ առայսօր չունի քաջութիւնը թաբուները քանդելու: Ահա այդ բարձունքն է, եւ ոչ թէ Սերժ Սարգսեանին կրկնելու, քու բառովդ՝ «թութակելու» մարմաջը, որ կը մղէ մեզ՝ ՌԱԿ բարենորոգիչներս, «այո» ըսելու Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններ հաստատելու, թուրքին հետ «աչք-աչքի» խօսելու նախաձեռնութեան, ձեզմէ աւելի լաւ գիտնալով ու պատկերացնելով նաեւ վտանգները:

Վերջաւորութեան կ'ուզեմ թելադրանք մը ընել քեզի՝ առանց յամենալու «թութակել» նորահնար բայիդ վրայ եւ առանց օգտագործելու համապատասխան «մինասել» բայակազմութիւնը իմ կողմէս. նախընտրելի է հետեւիլ ազգային պետութեանդ բարձրագոյն իշխանութեան քայլերուն, քան կուսակցութեան մը, այս պարագային՝ ՀՅ Դաշնակցութեան: Դժբախտաբար դուն եւ դուք փաստօրէն այդ է որ կ'ընէք արդէն երեք տարիէ ի վեր, միայն ձեզի յատնի պատճառներով: Հայ-թրքական յարաբերութիւններու մարզին մէջ Դաշնակցութեան հետեւորդ ըլլալը կը նշանակէ սխալ ուղեցոյցի հետեւիլ, որուն սխալականութիւնը փաստացի իրողութիւն է առնուազն 1908 թուականէն ասդին:

Ընկերական ողջոյններով՝

ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ

AZG NEW PDF.qxd 1/14/2010 10:03 PM Page 1



# «Ղարաբաղյան հիմնահարցում Ռուսաստանի դերը կարգավորման աշխատանքներին նպաստելն է»

## Հայտարարել է Պուտինը Էրդողանի հետ մամուլի համատեղ ասուլիսում

Երեկ ավարտվեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի երկօրյա պաշտոնական այցը Մոսկվա: Արդյունքները դեռ ամփոփված չեն: Սակայն, անկախ արդյունքներից, ակնհայտ է ատոմակայանի հետ կապված թուրքական հաշվարկների ձախողումը:

Դեռեւս հունվարի 13-ին ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի եւ վարչապետ Էրդողանի հանդիպման օրը, հիմք ընդունելով «Զամանի» հոդվածը, «**Ազգը**» տեղեկացրել էր թուրքական ատոմակայանի կառուցումն իբրեւ հաղթաթուղթ օգտագործելու, որի միջոցով Լեռնային Ղարաբաղում «առաջընթաց» ապահովելու Անկարայի նկրտումների մասին:

Թեեւ կողմերը նախաստորագրել են «Թուրքիայում ատոմակայան կառուցելու բնագավառում համագործակցության» միջպետական համաձայնագիր, Պուտին-Էրդողան հանդիպմանը քննարկվել է նաեւ ղարաբաղյան հիմնահարցը, սակայն նախաստորագրված համաձայնագիրն ու քննարկումն ընդհամենը հիասթափություն են պատճառել Անկարային: Թերեւս դա է պատճառը, որ Պուտինի հետ Էրդողանի հանդիպման ավարտին կազմակերպված մամուլի համատեղ ասուլիսում ղարաբաղյան հիմնահարցին անդրադարձել է միայն ՌԴ վարչապետը:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ NTVMSNBC եւ Tuskishny.com կայքէջերի հրապարակումներին: Առաջին կայքէջի վկայությամբ, հանդիպմանը Էրդողանը Ռուսաստանից պահանջել է ավելի ակտիվ դեր ստանձնել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում, իսկ Պուտինն ընդգծել է, որ Թուրքիա-Հայաստան եւ Հայաստան-Ադրբեջան հիմնահարցերն առանձին խնդիրներ են, ուստի դրանց շաղկապումը էլ ավելի կձգձգի հակամարտության կարգավորումը Լեռնային Ղարաբաղում:

Ինչ վերաբերում է մամուլի ասուլիսին, ապա այնտեղ Նյու Յորքի թուրքական կայքէջի վկայությամբ, վարչապետ Պուտինն ասել է, որ իրենք շահագրգիռ են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացով եւ բարձր են գնահատում նորմալացման ուղղությամբ կատարվող քայլերը:

Ռուսաստանի վարչապետը նշել է, որ նորմալացման գործընթացն ու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրները բնույթով բարդ խնդիրներ են, ապա եւ շարունակել. «Այդ իսկ պատճառով այս խնդիրներին ոչ թե փաթեթային մոտեցում է պետք ցուցաբերել, այլ՝ առանձին քննարկումներ: Նույնիսկ առանձին քննարկման դեպքում դժվարամատչելի այս խնդիրները շաղկապելը կնշանակի հետաձգել դրանց կարգավորումը»:

Այնուհետեւ Վլադիմիր Պուտինն ավելացրել է. «Մենք նպաստելու ենք Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմանը: Ռուսաստանը կառուցողական աջակցություն է ցուցաբերելու կարգավորմանն ուղղված դրական բոլոր աշխատանքներին եւ դա է լինելու նրա դերը ղարաբաղյան հիմնահարցում»:

Հ. Չ.

# Իսրայելը ներողություն խնդրեց Թուրքիայից

Վերջին երկու օրում Իսրայելի ԱԳՆ-ն Անկարային երկու ուղերձ է հղել, ներողություն խնդրելով թուրք դեսպանի նկատմամբ «նվաստացուցիչ վերաբերմունքի» համար, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը: Թուրքիայի ԱԳՆ-ն հայտարարել է, որ միջադեպը սպառված է, եւ թուրք դեսպանը հետ չի կանչվի Իսրայելից: Հետկանչի մտադրության մասին «**Ազգը**» գրել էր երեկվա համարում:

Միջադեպի մեղավորը՝ Իսրայելի փոխարտգործնախարար **Դանի Այալոնը**, իր ուղերձում նշում է, որ ինքը մտադրություն չի ունեցել «նվաստացնելու անձամբ դեսպանին», ավելացնելով, որ իրենք «խորապես հարգում են թուրք ժողովրդին»:

Թուրքիայի նախագահ **Աբդուլլահ Գյուլը** միջադեպից հետո խոստացել էր Իսրայելում փակել թուրքական դեսպանատունը, եթե պաշտոնական Երուսաղեմը ընդունելի ձեւով ներողություն չխնդրի:

Դիվանագիտական վեճի պատճառը Թուրքիայում ցուցադրվող «Գայլերի հովիտը» սերիալն է, որտեղ իսրայելցի զինվորականները ներկայացվում են որպես բազմաթիվ խաղաղ պաղեստինցիների սպանության մեղավորներ, իսկ Իսրայելի հատուկ ծառայությունների աշխատակիցները՝ որպես մանուկների առեւանգիչներ:

Հունվարի 11-ին Դանի Այալոնը իր մոտ էր կանչել Թուրքիայի դեսպանին, որպեսզի բողոք հայտնի «հակահրեական» ֆիլմի ցուցադրման կապակցությամբ: Հրեա դիվանագետները թուրք դեսպանին նստեցրել էին ցածր բազմոցին, սեղանի վրա թողել միայն իսրայելական դրոշ եւ թույլ տվել ուրիշ անվայել արարքներ:

Հաջորդ օրը Այալոնն իր առաջին մեղայական ուղերձում խոստացել էր այլեւս չվիրավորել օտարերկրյա դեսպաններին: Թուրքական կողմը դա համարել էր անբավարար: Դեսպանատունը փակելու սպառնալիքը մնում էր ուժի մեջ: Իսրայելում ընդդիմությունը կառավարող կոալիցիային մեղադրել էր պետության շահերն անտեսելու եւ Իսրայելը երբեմնի ՀԱՀ-ի նման «ապարթեիդի պետություն» դարձնելու մեջ: Դրանից հետո Այալոնը նախագահ Շիմոն Պերեսի անձնական խնդրանքով Անկարային հղել էր մեղայական երկրորդ ուղերձը, որը եւ բավարարել էր թուրքական կողմին:

# Համակովկասյան հեռուստալիք՝ վրացական հիմքով

Հունվարի 15-ից Վրաստանի հանրային հեռուստատեսության հիմքի վրա ստեղծված «Առաջին կովկասյան հեռուստալիքը» կսկսի եթեր հեռարձակվել ամբողջ Կովկասի տարածքով:

Մինչեւ հիմա ալիքը եթեր էր հեռարձակվում ռուսերենով եւ միայն համացանցի միջոցով, իսկ այժմ արբանյակի օգնությամբ կարող են տեսնել նաեւ Ռուսաստանի հարավային մարզերում: Ալիքի հաղորդավարներից են ռուս լրագրող Օլեգ Պանֆիլովը, Չեչնիայի առաջին նախագահի այրին՝ Ալլա Դուդաեւան:

Պաշտոնական տվյալներով՝ հեռուստալիքը պատրաստվում է մատակարարել միայն օբյեկտիվ լրատվություն, սակայն վրացական ընդդիմությունն արդեն հայտարարել է, որ ալիքը նախագահ Սաակաշվիլու անձնական նախագծերից է, որի նպատակն է խռովություն մտցնել կովկասյան ազգերի մեջ: Այս մասին տեղեկացնում է թերթը:

Հ. Ա.

# Google-ը կարող է հեռանալ Չինաստանից

Google ընկերությունը հայտարարել է, որ ինքը կարող է հեռանալ Չինաստանի շուկայից՝ չին իրավապաշտպանների Gmail էլեկտրոնային փոստը կոտրելու համակարգչահենների փորձերի պատճառով:

BBC-ն մեջբերում է Google որոնողական համակարգի ներկայացուցիչների այն խոսքերը, որ «լավ մտածված գրոհներ են կազմակերպվել» Չինաստանում ընկերության կորպորատիվ ենթակառույցի վրա:

ՉԺՀ կառավարությունը բացահայտորեն չի մատնանշվում, բայց հայտարարվում է, որ ընկերությունն այլեւս ինքնագրաքննության չի ենթարկելու որոնման արդյունքներն իր չինական կայքում, ինչպես դա պահանջում են երկրի իշխանությունները:

Դա նշանակում է, որ 2006-ին Google-ի բացած չինական կայքը կարող է փակվել:

Պաշտոնական Պեկինն առայժմ չի մեկնաբանել Google-ի հայտարարությունը: ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը Google-ի մեղադրանքների կապակցությամբ ասել է, որ «դրանք հարուցում են լուրջ մտահոգություն», եւ որ Միացյալ Նահանգները բացատրություն է պահանջում ՉԺՀ իշխանություններից:

Google-ը մտադիր է առաջիկա շաբաթներին բանակցել Չինաստանի իշխանությունների հետ եւ հույս ունի այդ երկրում հաճախորդներին տրամադրել զտումից զերծ որոնողական համակարգ:

2009-ին ինտերնետ-որոնման չինական շուկան գնահատվում էր ավելի քան 1 մլրդ դոլար: Ըստ կանխատեսումների, 2010-ին այդ շուկայում Google ի գործունեությունը կարող է բերել մոտ 600 մլն դոլար:



# Վաստակաշատ բժիշկ Էդգար Հուսեփյան



*«Ազգ»-ի 2009 թ. նոյեմբերի 11-ի համարում տեղեկացվել էր, որ 2010 թ. հունվարի 15-ին Նյու Յորքի կենտրոնում գտնվող «Կիպրիանի» համերգասրահում Հայ օգնության ֆոնդի հովանավորությամբ կազմակերպված գալա-ճաշկերույթով Նյու Յորքի հայ համայնքի ներկայացուցիչները կպատվեն ճանաչված նյարդաբան-վիրաբույժ, դոկտ. Էդգար Հուսեփյանին: Այդ առթիվ ընթերցողին ենք ներկայացնում Էդգար Հուսեփյանի համառոտ կենսագրականն ու անցած ուղին:*

Ամերիկահայ անվանի նյարդավիրաբույժ, պրոֆեսոր **Էդգար Հուսեփյանը** (Հովսեփյան) ծնվել է 1928 թ. Նյու Յորքում, քեսաբցի եւ իզմիրցի ծնողների ընտանիքում: Դեռեւս 1942 թ., երբ ընթանում էր Երկրորդ համաշխարհային պատերազմը, 14-ամյա Էդգարը որպես սանիտար աշխատել է Նյու Յորքի հիվանդանոցում: 1949 թ. ավարտել է Կոլումբիայի համալսարանի քոլեջը, ապա՝ նույն համալսարանի բժշկական ու վիրաբուժական բաժինը եւ ստացել վիրաբույժի մասնագիտություն: Այնուհետեւ ծառայել է ԱՄՆ նավատորմում, իսկ հետագայում մասնագիտացել է նյարդավիրաբուժության մեջ: Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանի բժշկական ֆակուլտետի դեկանն է: Անդամակցում է ամերիկյան եւ միջազգային ավելի քան 40 բժշկական ընկերությունների եւ միությունների: Ղեկավարում է բազմաթիվ համալսարանական եւ հիվանդանոցային հանձնախմբեր ու կոմիտեներ: Հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատությունների: Արժանացել է բազմաթիվ շնորհների ու պարգեւների: Հիշատակության է արժանի Էլիս Կղզու պատվո շքանշանը, որը պրոֆեսորին շնորհվել է Միացյալ Նահանգներում կատարած բացառիկ գործունեության ու ներդրումների համար:

1988 թ. Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո պրոֆեսոր Հուսեփյանը Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդարանի հետ ստանձնել է Հայաստանին օգնության ֆոնդի բժշկական ծրագրերի կոորդինացիան եւ ղեկավարումը: Նրա անմիջական ղեկավարությամբ մի խումբ ամերիկյան բժիշկներ ստեղծել են Հայ օգնության ֆոնդի բժշկական հանձնախումբը, որի աշխատանքների մեջ հատկանշական են հայաստանցի բժիշկ մասնագետների վերապատրաստման ծրագրերը, առանձնապես գնահատելի են Հայ օգնության ֆոնդի բժշկական հանձնախմբի՝ Հանրապետական գիտաբժշկական գրադարանի զարգացման ծրագրերը, որոնք շարունակվում են մինչեւ այսօր: ՀՕՖ-ը գրադարանն ապահովել է մասնագիտական գրականությամբ, համակարգչային տեխնոլոգիաներով, «Ինտերնետ» համակարգչային ցանցով:

1992 թ. հայ ժողովրդին մատուցած ծառայությունների համար Ամերիկայի Հայ առաքելական եկեղեցու Արեւելյան թեմի առաջնորդարանը պրոֆ. Հուսեփյանին շնորհել է «Տարվա հայը» պատվավոր տիտղոսը: 1997 թ. Էդգար Հուսեփյանին շնորհվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր ակադեմիկոսի կոչում, ապա՝ Մխիթար Հերացու անվ. Երեւանի պետական բժշկական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում եւ հուշամեդալ:

Հետաքրքրական է, որ պրոֆ. Էդգար Հուսեփյանը Մայր Հայաստանի հետ կապված է գենետիկորեն, եւ արդեն շուրջ 100 տարի:

Նրա հայրը՝ քեսաբցի բժիշկ Մովսես Հուսեփյանը (1876-1952) 1916 թ. Ամերիկյան Կարմիր խաչի ներկայացուցիչների խմբի կազմում Ամերիկայից ժամանել է Հայաստան եւ Էջմիածնում շուրջ մեկ տարի բժշկական օգնություն ցուցաբերել Եղեռնից մազապուրծ, սովից ու վարակիչ հիվանդություններից տառապող հայրենակիցներին: Նրա եւ գործընկերների շնորհիվ հազարավոր հայեր փրկվել են անխուսափելի մահից: Էջմիածնում նրան կոչում էին «Փրկիչ»:

Էդգար Հուսեփյանի քրոջ՝ ամերիկահայ նշանավոր գրող Մերջըրի Հուսեփյանի գրչին է պատկանում հայկական Զմյուռնիայի ողբերգական դեպքերի մասին «Զմյուռնիա 1922» գիրքը:

Քրոջ որդին՝ համակարգչային ծրագրավորման մասնագետ, նյույորքաբնակ Սթիվ Ջոնսոնը եւս սերտ կապերով կապված է Հայաստանի հետ: Լինելով կիսով չափ հայ նա ազատորեն տիրապետում է արեւմտահայերենին: Մի քանի անգամ եղել է Հայաստանում եւ Արցախում՝ բուժհիմնարկներին նվիրելով արժեքավոր բժշկական սարքեր, պարագաներ ու դեղորայք:

Ահա այսպես, ծնված լինելով Ամերիկայում եւ ապրելով տասնյակ հազարավոր կիլոմետրեր հեռու Հայաստանից՝ Հովսեփյանների ընտանիքը ապրում է Մայր ժողովրդի դժվարություններով եւ ուրախություններով:

Այսօր էլ պրոֆեսոր Էդգար Հուսեփյանը, չնայած պատկառելի տարիքին, շարունակում է զբաղվել բժշկական, գիտական, հասարակական ու ազգային գործունեությամբ եւ կատարել հայրենանվեր առաքելություններ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՆԱՍՅԱՆ
հոգեբույժ

# Ամերիկուհին դստերը փոխանակեց ատրճանակի հետ

Արիզոնայի նահանգի 33-ամյա բնակչուհի Տանյա Նարոն իր երկամյա դստերը փոխանակել է ատրճանակի հետ: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ կինը ձերբակալվել է «գործարքի» իրականացումից անմիջապես հետո: Ծրագրվող գործարքի մասին ոստիկանությանը պատմել էին Նարո ընտանիքի բարեկամները, ում հետ կինը նախատեսել էր փոխանակել դստերը: Ոստիկանությունում հարցաքննության ժամանակ կինը խոստովանել է, որ ինքը որոշել էր վաճառել դստերը, գտնելով, որ բարեկամներն իրենից լավ կդաստիարակեն աղջկան:

Ձերբակալությունից հետո կնոջը ներկայացվել են երեխան վաճառելու եւ ապօրինաբար զենքի ձեռքբերման փորձ կատարելու մեղադրանքներ:

AZG NEW PDF.qxd 1/14/2010 10:04 PM Page 1



# Շնորհավորանքներ` «Ազգ»-ին

*Ամեն Ամանորի տոներից հետո «Ազգի» խմբագրի` հին ու նոր հոդվածներով, նամակ-գրություններով ծանրաբեռ սեղանի մի անկյունում հայտնվում են բացիկների տոնական կապուկներ (մի ժամանակ շատ ավելի լայն տարածում ունեցող սովորույթ, հիմա թերեւս պաշտոնական բնույթի վերածված): Տարիներ շարունակ այս բացիկ-շնորհավորանքների, երբեմն էլ ընծաների ավանդույթը քանի շարունակվում է, մենք էլ արձագանքում ենք երեւույթին` մեր շնորհակալությամբ:*

*Ժամանակի պայմանական բաժանարար Նոր տարին, թվում է` նորովի մտածելու, ինչ-որ բան նոր սկսելու խորհրդանիշ կամ հուշարար է: Գուցե դա այդպես է, եւ հենց Սուրբ Ծննդյան խորհրդի մեջ է դա դրված, բայց, ցավոք, մենք մեծամասամբ անհաղորդ ենք այդ խորհրդին: Ու հենց այդ օրերին ենք ավելի կարծրանում, սեղանին կառչած մնում, նյութի պաշտամունքի հասնող հայկական, ցավոք, անդառնալի թվացող ամանորյա սովորույթներով:*

*Տարեթվերը այսպես գլորվում ու պատմություն են գոյացնում. հիշողություն, տարեգրություն: Մեր կյանքի գետը սակայն շարունակում է հոսել նույն հունով, նույն արագությամբ. թվում է` ոչինչ չի փոխվում: Սակայն դա այդպես է մեր փոքրիկ պատուհանից ներս միայն. աշխարհը անճանաչելիորեն փոխվում է, փոխվում են մտածողությունն ու մարդու կենսակերպը, փոխվում է բնությունը, փոխվում է ժամանակը, քանի որ փոխվում է արագությունը:*

2010-ը թվային զույգ համադրությամբ եւ հորոսկոպային նշանով մարդկանց հուսադրում է` վագրը որքան էլ ագրեսիվ, նույնքան համարձակ ու ազատասեր է. ինքը համակրելի է, կարեւորը` ընդգծված խառակտերային է:

Ու որքան էլ ակտիվացրել են ինտերնետային կայքէջերը կամ լրատվական ծրագրերը դեպի Երկիր շարժվող Նիբիրու մոլորակի մասին լուրերը եւ 2012 թվականին` Երկրի մոտալուտ վախճանի մասին վարկածները, միեւնույն է` մենք շարունակում ենք ապրել գեթ մեր սովորական հունը չփոխելով, ուրախանում ու տխրում ենք, հավատում ու հիասթափվում, ատում ու սիրում: Բայց ինչ-որ մի բան, այնուամենայնիվ, ինչ-որ տեղ անհանգիստ է, կամ անհեթեթ պարզապես, նոսրացած (աղճատացած, լքված): Ինչեւէ, կյանքը շարունակվում է ու փոխարեն այս կարճ ու բարակ խոսքերի, պիտի պարզապես մեր Ամանորն ու Սուրբ Ծնունդը շնորհավորողներին թվարկեի պարզ շնորհակալությամբ, բայց այդպես չարեցի, որովհետեւ ձանձրալի է սոսկ արձանագրելը:

Մեզ շնորհավորել են պետական-պաշտոնական, կառավարական ու հասարակական ամենատարբեր ոլորտներից, կազմակերպություններից, ինչպես նաեւ առանձին անձինք:

Եվ այսպես`

Մայր աթոռ սբ Էջմիածին` Գարեգին Բ կաթողիկոս Ամենայն հայոց, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյան, ԱԺ փոխնախագահ Արեւիկ Պետրոսյան, սփյուռքի, մշակույթի, տրանսպորտի եւ կապի, արտաքին գործերի, արդարադատության, գիտության եւ կրթության նախարարները, Արարատյան թեմի առաջնորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանը, Մայր աթոռի կաթողիկոսարանի դիվանապետ Արշակ եպսկ. Խաչատրյանը, ՀայՌուսգազարդը, ԿԱ պետեկամուտների կոմիտեն, Փաստաբանների պալատը, ՀՀ գլխավոր դատախազը, Յունիբանկը, Կենտրոնական բանկը, «Անելիք», «Պրոկրեդիտ», «Ամերիա» բանկերը, Երեւան-ջուր ընկերությունը, Sil Group-ը, «Դիլիջան-էքսպո» ՓԲԸ-ն, «Արարատ» կոնյակը, «Աշտարակ-կաթ»-ը, Artfood-ը, Ֆինանսական վերահսկողության վարչությունը, Երեւանի քաղաքապետի 1-ին տեղակալը, Շենգավիթի վարչական շրջանի ղեկավարը, Արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարը, Ֆիլիպ Մորիս Մենեջմենտ Սերվիս Բ. Վ. Հայաստանի ներկայացուցչությունը, Beeline, ՎիվաՍել ՄՏՍ, Orange կազմակերպությունները, ԵԱՀԿ (OSCE) երեւանյան գրասենյակը, Delegation of the Europen Union to Armenia-ն, ՄԱԿ ՀՏԿ անձնակազմը, Վոլդ Վիժն Հայաստանը, ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչը, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանը, Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Սեյեդ Ալի Սաղաիյանը, ԻԻՀ դեսպանության մշակույթի խորհրդական Մոհամմադ Ռեզա Շաֆիբան, Կորեայի Հանրապետության պատվո հյուպատոս Արմեն Աբրահամյանը, Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ Վլադիմիր Աղայանը, ԱԺ պատգամավոր Գագիկ Աբրահամյանը, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, ՀՅԴ Գերագույն մարմինը, Ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեւորգյանը, «Արմինկո» ՍՊԸ-ն, ՀՀ ԱԱՊ կից արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարը, «Սյունյաց արծիվներ» երիտասարդական ՀԿ-ն, Հայ օգնության ֆոնդը, Հայկական ակնաբուժական նախագիծը, Բարեգործական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը, ՀՀ վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը, Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանը, պետական մանկավարժական համալսարանը, ԳԹԿ տնօրենությունը, Կրթությամբ զարգացման ակադեմիան, Այբ կրթական հիմնադրամը, «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի տնօրենը, Գաֆեսճյան արվեստի կենտրոնը, Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանը, Գեղակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը, Ազգային կինոկենտրոնը, Դրամատիկական թատրոնի գեղ. ղեկավար Արմեն Խանդիկյանը, «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիան, Մատենադարանի տնօրեն Հր. Թամրազյանը, «Շանթ», «Երկիր Մեդիա», Հ-1 հեռուստաընկերությունները, Հանրային ռադիոն, Արմենպրեսը, Պրես Ասսաշե ՍՊԸ-ն, Հայկական գովազդային խորհրդատվությունը, Prudnce իրավաբանական խորհրդատվությունը, Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան Վահե Գաբրիելյանը, Ա. Քոթանջյանը, Ասփանազ Աբրահամյանը, Ֆելիքս Բախչինյանը, «**Ազգի**» նախկին լրագրող, այժմ մոսկվայաբնակ Լիլիթ Գրիգորյանը եւ իր ամուսինը` Մաքսիմը: Շնորհավորանքներ ենք ստացել նաեւ ինտերնետային ցանցով` ԵՊՀ հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչությունից, Հայ-թուրքական զարգացման բիզնես խորհրդից, արտակարգ շնորհավորանքներ արտակարգ սիրով` Արտակարգ ալիք լրատվական կենտրոնի տնօրեն Նիկոլայ Գրիգորյանից, Վանաձորից «**Ազգ**»-ին թղթակցող Լեւոն Սարգսյանից:

Շնորհավորանքները բոլորն են գեղեցիկ, բարեմաղթանքները` սրտահաճո, այդուհանդերձ հայացքդ ակամա առանձնացնում է մեկ-երկուսը, միտքդ` նույնպես. երբ ընթերցելիս տողերի վրայով պարզապես չես սահում, եւ դրանք մտորել են տալիս: Այդպիսին է «Արեւորդի» էկո-ակումբի սաների ձեռքի աշխատանք բացիկը, որում ոչ միայն բնապահպանական խնդիր է լուծված` (թղթի թափոնների` պարզ եղանակներով վերամշակում), այլ նաեւ արվեստի փոքրիկ գործ է հիշեցնում, հին ձեռագրաթղթի նմանվող անհարթ մակերեսի անպաճույճ նկարներով:

**Մ. Բ.**






# Հարգանքի տուրք Էդգար Հովհաննիսյանի հիշատակին

**Երեկ քաղաքային պանթեոնը խճողված էր երաժիշտներով, մտավորականներով, որոնք եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու, ՀՀ մշակույթի նախարարության եւ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նախաձեռնությամբ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանին` նրա 80-ամյակի առիթով: Էդգար Հովհաննիսյանը բացառիկ ներդրում է ունեցել հայ երաժշտարվեստի զարգացման գործում, ում ստեղծագործական հիմնական մոտիվն ազգն էր, նրա պատմությունն ու կյանքը` խտացունչ վիպականությամբ, դինամիկ հուզականությամբ, խորը փիլիսոփայական եւ էթիկական կերպարներով, ում ստեղծագործական համարձակ լուծումները բխում են հայ ժողովրդական եւ դասական երաժշտության ավանդույթներից: Ահա այսպես էին բնութագրում Էդգար Հովհաննիսյանին Երգչախմբային ընկերության նախագահ, պրոֆեսոր Դավիթ Ղազարյանը, երաժշտագետ, պրոֆեսոր Արմեն Բուդաղյանը, Էդգար Հովհաննիսյանի առաջին շրջանավարտ, պրոֆեսոր Երվանդ Երզնկյանը, պրոֆեսոր Էդվարդ Թադեւոսյանը եւ երաժշտագետ Ծովինար Մովսիսյանը: Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ավարտելուց հետո, Էդգար Հովհաննիսյանը Արամ Խաչատրյանի ղեկավարությամբ ավարտում է Մոսկվայի կոնսերվատորիան, ու հետո նշանակվում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար, տնօրեն: Հենց այդ տարիներին Էդգար Հովհաննիսյանի ղեկավարությամբ, ԽՍՀՄ-ում առաջին անգամ բեմադրվել են Ռ. Վագների «Տանհոյզեր» եւ Ի. Ստրավինսկու «Էդիպ արքա» օպերաները: 1986-1992 թթ. կոմպոզիտորը ղեկավարել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան:**

**Կոմպոզիտորը շատ բծախնդրորեն է մոտեցել իր բոլոր ստեղծագործություններին, լինեն դրանք խմբերգեր, օպերա-բալետ, բալետ, սիմֆոնիա, կվարտետ: Նա յուրահատուկ կոմպոզիտոր էր ու կարողացավ ստեղծագործել երաժշտական բոլոր ժանրերում, թողնելով հրաշալի գործեր: Թվեմ մի քանիսը` «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը, «Հավերժական կուռք», «Անտունի», «Ժաննա դ' Արկ», «Սուլամիթ» բալետները, «Գրիգոր Նարեկացի» օրատորիան, երեք սիմֆոնիաները, մի շարք ժողովրդական երգերի մշակումներ, կամերային եւ երգչախմբային ստեղծագործություններ: Կոմպոզիտորը նաեւ իր վրա էր վերցրել նաեւ «Հայաստանի մանկական ֆոնդի» ղեկավարությունը ու մեծ նվիրումով լծվել գործի: Արցախյան ինքնապաշտպանության օրերին երաժիշտներին տանում էր Արցախ, կազմակերպում համերգներ ու հանդիպումներ: Ահա այսպես էին նկարագրում անվանի կոմպոզիտորին թե որպես երաժիշտի եւ թե որպես հասարակական գործչի: Նրա ստեղծագործությունները պետք է շարունակաբար բեմադրվեն ու հնչեցվեն, դա արդեն սերունդների պարտքն է:**

**Կոմպոզիտորի առաջին սան Երվանդ Երզնկյանը հպարտորեն նշում էր. «Էդգար Հովհաննիսյանից ես քաղել եմ որոշ հասկանիշներ, որոնք մինչեւ հիմա փորձում եմ կիրառել մանկավարժության մեջ, նրա մարդկային անգնահատելի տեսակը, երիտասարդներին ճիշտ ուղու վրա դնելու հասկությունը եւ էլի շատ գծեր: Ցավում եմ, որ այսօր նա մեզ հետ չէ»:**

**Կոմիտասի անվան լարային քառյակի գեղղեկ. պրոֆեսոր Էդվարդ Թադեւոսյանը երախտագիտությամբ նշեց. «Էդգար Հովհաննիսյանը 20-րդ դարի լավագույն կոմպոզիտորներից էր: Նրա չորս կվարտետներից երկուսը նվիրված էին «Կոմիտասի» անվան կվարտետին եւ մենք շատ ավելի ջերմ շփումների մեջ էինք ու հպարտորեն էինք կատարում այդ ստեղծագործությունները»: Ջերմ ու ընկերասեր մարդը դեռ շատ ծրագրեր ուներ իրականացնելու, ցավոք` կյանքը ընդհատվեց ու նա միայն հուշերում մնաց:**

**Անվանի կոմպոզիտորի շիրիմը ծածկվեց ծաղիկներով ու խոնարհվեց նրա անմահ հիշատակը:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Հայկական կերպարվեստը տխուր իրականության մեջ

**Հայաստանի նկարիչների միությունը առանձին հասարակական կազմակերպություն է եւ ոչ մի կապ չունի պետական բյուջեի հետ:**

**«Տնտեսական ճգնաժամը միության համար նորություն չեղավ, քանի որ այն միշտ ապրում է ճգնաժամի մեջ: Պետությունը մեզ չի աջակցում` չնայած դրան մենք գոյատեւում ենք, ավելին` իրականացնում ենք ակտիվ ցուցահանդեսային գործունեություն:Միության շենքը մեր սեփականությունն է, եւ այստեղ մի քանի սենյակների վարձակալության գումարով կարողանում ենք աշխատել, բայց եթե վարձակալներից մեկը մեզնից հեռանա, մենք կարող ենք նաեւ փակվել: Այսօր անընդհատ պրովոկացիա է արվում` ո՞մ է պետք նկարիչների միությունը, իսկ ես էլ կարող եմ ասել` ո՞մ են պետք սնկի պես աճող խաղատները», -ասում է Նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը:**

**Զարգացող ու զարգացած բոլոր երկրներն էլ ունեն նկարիչների միություններ: Գոյություն ունեն համաշխարհային, նաեւ եվրոպական նկարիչների միություններ: Կերպարվեստը մշակույթի կարեւոր հիմնասյունն է, եւ սրա զարգացումը խթանում են նաեւ ստեղծագործական կազմակերպությունները: Եթե նկարիչը չի ցուցադրվում, նա կորչում է, իսկ Հայաստանում միակ տեղը, ուր նկարիչը կարող է լիարժեք ցուցադրվել, դա նկարիչների միությունն է:**

**«Հայաստանն աշխարհում միակ երկիրն է, որտեղ արվեստանոցի նկարիչից գույքահարկ են վերցնում ոչ թե բնակարանի նման, այլ ռեստորանի: Նկարիչներս տարիներ շարունակ ասում, աղմկում ենք այդ մասին, բայց մեզ բանի տեղ դնող չկա: Բոլոր երկրներում արվեստանոցները կամ անվճար են տրամադրում, կամ կես գինն են վերցնում: Մեր նկարիչները ցավալի վիճակում են հայտնվել: Ինչ վերաբերում է միության շենքին` մի քանի տարի առաջ մեր գույքահարկը միանգամից բարձրացավ 690 անգամ: Տարեկան տալիս ենք շուրջ 7- 8000 դոլար գույքահարկ, որը ծանր է մեր համար»,- ասում է Կարեն Աղամյանը:**



**Հայկական կերպարվեստը կտրված է համաշխարհային կերպարվեստից: Եթե հայ նկարիչն ուզենա ցուցադրվել, օրինակ, Մոսկվայի Կենտրոնական նկարչի տանը, նա մեկ գծամետրի համար պետք է վճարի 250-350 եվրո, ընդհանուր հաշվով` 4-5000 եվրո` 9 օրվա եւ ընդամենը 10 աշխատանքի համար: Հազարից մեկը հայ նկարիչներից կարող է այնտեղ ցուցադրվել, իսկ ասենք Նյու Յորքում, Քյոլնում ցուցադրվելը շատ ավելի թանկ արժե: Ըստ Կարեն Աղամյանի` որակային առումով մենք առայժմ կարող ենք խոսել, օրինակ, ֆրանսիական կերպարվեստի հետ, բայց արդյունաբերության հետ` ոչ: Հայկական կերպարվեստը աշխարհում հիշում են միայն այն դեմքերով, ովքեր դեռ Խորհրդային տարիներին են կարողացել դուրս գալ համաշխարհային մշակույթի ասպարեզ` Մարտիրոս Սարյան եւ Մինաս Ավետիսյան:**

**Քչերը գիտեն, որ նկարիչների միությունն իր տարածքների մոտ 70 տոկոսը կորցրել է, դրանք պտորինի ձեւով վաճառել են նախորդ տարիների աշխատողները: Քանի դեռ չկա հսկողություն մշակույթի նախարարության կողմից, միության` Աբովյան 16 հասցեում գտվող շենքի հանդեպ էլ ոտնձգություններ անընդհատ լինելու են: Ինչեւէ այստեղ ցուցադրությունները չեն դադարում, ներքեւում առաջիկա ցուցադրությունների անոնսն է:**

**հունվարի 15-21` Խաչիկ Աբրահամյան** - գեղանկարչական աշխատանքներ

**հունվար 15-25` Արա Բաղդասարյան** - գրաֆիկական աշխատանքներ

**փետրվար 1-9-ին`** հանրապետական երիտասարդական ցուցահանդես` նվիրված Սուրբ Սարգսի տոնին

**փետրվար 15-25` Խաչանյան Յուրա** - գրաֆիկական ու գեղանկարչական գործեր

**փետրվար 15-25`** Մանկավարժական ինստիտուտի նկարիչ դասախոսների աշխատանքների ցուցադրություն

**մարտի 2-11`** կանանց տոնին նվիրված - կին նկարիչների աշխատանքներ

**մարտի 1-10` Անուշ Եղիազարյան** - դեկորատիվ արվեստի աշխատանքներ

**մարտի 16-26` Փարավոն Միրզոյան** - գեղանկար

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

AZG NEW PDF.qxd 1/14/2010 10:35 PM Page 1



# Արթուրն ու Վիկը ռինգ դուրս կգան նույն օրը

## *Ջերմեն Թեյլորը հրաժարվեց մրցաշարից*





Առաջին թեթեւագույն քաշային կարգում WBC-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Վախթանգ Դարչինյանն իր տիտղոսների հերթական պաշտպանությունը կիրականացնի մարտի 6-ին՝ Կալիֆոռնիայում մրցելով ամերիկացի Ռաուլ Մարտինեսի հետ: Վերջինս 27 տարեկան է, պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 26 մենամարտերից շահել է 25-ը: Հետաքրքրական է, որ Մարտինեսը միակ պարտությունը կրել է 2009-ի ապրիլին Նոնիտո Դոներից, որի հետ մենամարտում Վախթանգը 2007-ի հուլիսին 5-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկվել:

Հայ բռնցքամարտիկը երազում է Դոների նկատմամբ ռեւանշի հասնել: Հնարավոր է, որ այդ մենամարտը կայանա հունիսին: Իսկ մինչ այդ Դարչինյանը մտադիր է եւս մեկ մենամարտ անցկացնել ապրիլին կամ մայիսին Ավստրալիայում:

Հիշեցնենք, որ դեկտեմբերի 12-ին Կալիֆոռնիայի Ռանչո Միրաժ քաղաքում Դարչինյանը հաջողությամբ պաշտպանել էր WBC-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Նրա մրցակիցը Թոմաս Ռոխասն էր, որը Վախթանգի դիպուկ հարվածից հետո արդեն 2-րդ ռաունդում հայտնվեց ռինգի հատակին:

Մարտի 6-ին հայ մարզասերները հնարավորություն կունենան հետեւելու նաեւ Արթուր Աբրահամի մենամարտին, որը կայանալու է Կալիֆոռնիայի Ռանչո Միրաժ քաղաքում, որտեղ նույն երեկո մինչ այդ ռինգ դուրս կգա Վախթանգ Դարչինյանը: Արթուրը 2-րդ միջին քաշային կարգի 6 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարում իր 2-րդ մենամարտը կանցկացնի: Նրա մրցակիցը կլինի ամերիկացի Անդրե Դիրելը: Այս պահին Արթուր Աբրահամը 3 միավորով այդ մրցաշարի առաջատարն է: Հիշեցնենք, որ առաջին մենամարտում նա 12-րդ ռաունդում նոկաուտի էր ենթարկել միջին քաշային կարգում աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն, ամերիկացի Ջերմեն Թեյլորին: Արթուրի հարվածն այնքան ուժգին էր, որ Թեյլորին անմիջապես տեղափոխել էին հիվանդանոց: Մրցաշարին նրա հետագա մասնակցության հարցը կասկածի տակ էր: Եվ ահա օրերս Թեյլորը հայտարարել է, որ ժամանակավորապես դադարեցնում է բռնցքամարտիկի իր գործունեությունը եւ դուրս է գալիս մրցաշարից. «Ինձ հարկավոր է հոգեբանորեն եւ ֆիզիկապես հանգստանալ, քանի որ բռնցքամարտին եմ նվիրել համարյա 20 տարի: Մտադիր եմ պահպանել մարզավիճակս եւ մոտ ապագայում վերադառնալ ռինգ»:

Այժմ մրցաշարի կազմակերպիչները պետք է շտապ կարգով Թեյլորին փոխարինող որոնեն: Հավանական թեկնածուն փետրվարի 5-ին կայանալիք Ալան Գրին-Սակիո Բիկա մենամարտի հաղթողն է:

# Կամերունցիների պարտությունն ուրախացրեց Մոուրինյոյին

**Ֆուտբոլի Աֆրիկայի գավաթի խաղարկությունում իրենց անդրանիկ հանդիպումներն անցկացրին «D» խմբում ընդգրկված թիմերը: Անհաջող մեկնարկեց Կամերունի հավաքականը՝ 0-1 հաշվով պարտվելով Գաբոնի ընտրանուն: Կամերունցիները վերջին անգամ Աֆրիկայի գավաթակիր էին դարձել 2002-ին: Նրանք իրենց առջեւ նպատակ են դրել կրկնել երկու տարի առաջ ցույց տված արդյունքը եւ մտնել եզրափակիչ: Սակայն դա հավաքականի վերջնական նպատակը չէ: Կամերունցիների առաջատար Սամյուել Էտո'Օ-ն հայտարարել էր մեկնարկից առաջ, որ ցանկանում է հաղթող ճանաչվել, ինչպես նաեւ դառնալ մրցաշարի լավագույն ռմբարկու:**

**Գաբոնի հավաքականի հետ կամերունցիները վերջին անգամ հանդիպել էին 2009-ի սեպտեմբերին աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում ու երկու խաղերում էլ հաղթել էին: Վերջին անգամ Գաբոնի հավաքականն Աֆրիկայի գավաթի խաղարկությունում հանդես է եկել 2000-ին: Եթե կամերունցիների կազմում Եվրոպայում հանդես եկող «աստղերի» թիվը մեծ է, ապա Գաբոնի հավաքականում կարելի է նշել միայն անգլիական «Հալի» հարձակվող Դանիել Կուզենին, որը կրում է հավաքականի ավագի թեւկապը: Հենց վերջինս էլ 17-րդ րոպեին դարձավ հանդիպման միակ գոլի հեղինակը՝ հաղթանակ պարգեւելով գաբոնցիներին: Վերջիններիս հաղթանակը հավանաբար ուրախացրել է նաեւ Միլանի «Ինտերի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոյին, որը հայտարարել էր, թե կամերունցիներին պարտություն է ցանկանում, որպեսզի Սամյուել Էտո'Օ-ն շուտ վերադառնա թիմ:**

**«D» խմբի մյուս խաղում Զամբիայի եւ Թունիսի հավաքականները մեկական գնդակ փոխանակեցին: Հաշիվը 19-րդ րոպեին բացեց զամբիացի Մուլենգան: Առաջին խաղակեսի ավարտին Դաուադին վերականգնեց հավասարակշռությունը: Զամբիայի հավաքականում ողջ հանդիպմանը մասնակցեց Երեւանի «Փյունիկում» հանդես եկող Էմանուել Մբոլան:**

# Ֆեռարան փրկվեց պաշտոնանկությունից

Ֆուտբոլի Իտալիայի գավաթի 1/8 եզրափակիչի «Յուվենտուս»-«Նապոլի» հանդիպումը սպասվում էր առանձին հետաքրքրությամբ: Բանն այն է, որ «Յուվենտուսի» գլխավոր մարզիչ Չիրո Ֆեռարայի ճակատագիրը կախված էր հանդիպման արդյունքից: Ակումբի ղեկավարությունը սպառնացել էր Ֆեռարային պաշտոնանկ անել, եթե «Յուվենտուսը» չհաղթեր «Նապոլիին»: Հետաքրքրական է, որ Ֆեռարան ծնվել է Նեապոլում եւ իր ֆուտբոլային կարիերան անցկացրել է միայն 2 թիմում՝ «Նապոլիում» (1984-1994) ու «Յուվենտուսում» (1994-2005) :

Սակայն «Յուվենտուսի» ֆուտբոլիստները փրկեցին իրենց մարզչի պատիվը՝ վստահ հաղթանակով քառորդ եզրափակիչի ուղեգիր նվաճելով: Արդեն 9-րդ րոպեին գնդակը հայտնվեց «Նապոլիի» դարպասում, սակայն մրցավարը չհաշվեց գոլը: Իսկ ահա Դիեգոյի հարվածից հետո «Յուվենտուսը» բացեց հաշիվը: 2-րդ խաղակեսում աչքի ընկավ թիմի ավագ Ալեսանդրո դել Պիեռոն: Նա նախ կրկնապատկեց հաշիվը, ապա 11 մ հարվածով ամրագրեց հանդիպման վերջնական արդյունքը՝ 3-0:

Քառորդ եզրափակիչում «Յուվենտուսը» կմրցի «Ինտերի» հետ: Պայքարը կշարունակի նաեւ «Միլանը», որը սեփական հարկի տակ հաղթեց «Նովարային» (2-1): «Միլանի» մրցակիցը կորոշվի «Ուդինեզեի» եւ «Լումեցանեի» մրցավեճում:

Քառորդ եզրափակիչ մյուս զույգը կազմեցին «Ռոման» եւ «Կատանիան»: «Ռոման» սեփական հարկի տակ 3-1 հաշվով պարտության մատնեց «Տրիեստինային», իսկ «Կատանիան» առավելության հասավ «Ջենոայի» նկատմամբ (2-1):

# Աբրամովիչն այլեւս չի ֆինանսավորի Հիդինկին

**Ռուսաստանի ֆուտբոլի ազգային ակադեմիան, որի հիմնադիրը Ռոման Աբրամովիչն է, այս տարվա հունվարի 1-ից դադարեցրել է հավաքականի գլխավոր մարզիչ Գուս Հիդինկի աշխատավարձի վճարումը: Այդ փաստը կազմակերպության ղեկավար Սերգեյ Կապկովը հետեւյալ կերպ է բացատրել. «Մենք Վիտալի Մուտկոյի հետ պայմանավորվածություն ունեինք ֆինանսավորել Գուս Հիդինկին մինչեւ 2010-ի հունվարի 1-ը: Մենք ամբողջությամբ կատարել ենք մեր պարտականությունները: Աշխատավարձի հետագա վճարման հարցը կվճռվի փետրվարին, երբ կընտրվի Ռուսաստանի ֆուտբոլային միության նոր նախագահ: Չի բացառվում, որ հետագայում մենք կրկին ֆինանսավորենք Հիդինկին»:**

**Հիշեցնենք, որ Գուս Հիդինկը մինչեւ հուլիսի 1-ը գործող պայմանագիր ունի ՌԴ ֆուտբոլի հավաքականի հետ, որի համաձայն նրա տարեկան աշխատավարձը 7 մլն եվրո է: Փետրվարի 3-ին կայանալու է Ռուսաստանի ֆուտբոլային միության արտահերթ կոնֆերանսը, որում կընտրվի նոր նախագահը: Հենց այդ կոնֆերանսում էլ կքննարկվի հավաքականում Հիդինկի աշխատանքը շարունակելու հարցը: Ընդ որում հոլանդացի մասնագետը ցանկացած պահի իրավունք ունի պայմանագիրը չեղյալ համարել, որի համար նրան ֆինանսական ոչ մի տույժ չի սպառնում:**

## ՖՈՒՏԲՈԼ

# «Միկան» մարզվում է Ծաղկաձորում

**Անցած մրցաշրջանում Աշտարակի «Միկան» «Փյունիկի» գլխավոր հակառակորդն էր չեմպիոնի տիտղոսի համար մղվող պայքարում: Միայն վերջնագծում «Փյունիկին» հաջողվեց գերազանցել իր հակառակորդին ու հերթական անգամ չեմպիոն հռչակվել:**

**Կարծում ենք այս տարի էլ «Միկան» չեմպիոնության համար պայքարից չի հրաժարվի: Համենայնդեպս, թիմն Արմեն Ադամյանի գլխավորությամբ լրջորեն է նախապատրաստվում նոր մրցաշրջանին: Թիմն իր մարզումները սկսել էր դեռեւս դեկտեմբերի 14-ից, իսկ հունվարի 7-17-ն ուսումնամարզական առաջին հավաքն է անցկացնում Ծաղկաձորում:**

**Ինչպես տեղեկացանք ակումբի մամուլի քարտուղար Աշոտ Մարտիրոսյանից, «Միկան» հիմնականում պահպանել է իր կազմը: Թիմից հեռացել են ռուս ֆուտբոլիստներ Նիկիտա Ֆուրսինն ու Մաքսիմ Մորոզովը, վրացի Իրակլի Ցանավան եւ բրազիլացի Մանուել դե Սոուզ Տիագոն: Հայաստանի հավաքականի նախկին հարձակվող Արա Հակոբյանի հետ պայմանագիրը չի երկարաձգվել: Վերջինս ներկայումս փորձաշրջանի է մեկնել Բելառուս:**

**«Միկայում» առայժմ 2 նորեկ կա: Դեռեւս անցած տարի թիմի հետ պայմանագիր են կնքել ՀՀ հավաքականի անդամ, «Ուլիսում» հանդես եկած պաշտպան Հրայր Մկոյանը եւ Լիտվայի հավաքականի դարպասապահ Սաուլիուս Կլեւենսկասը: Թիմում փորձաշրջան անցավ Տաշքենդի «Պախտակորի» նախկին հարձակվող Ավանես Հարությունյանցը, սակայն մարզիչներին չբավարարեց նրա պատրաստվածության մակարդակը: Փորձաշրջան անցած մյուս ֆուտբոլիստը բրազիլացի Ջունիոր Էդնիլսոնն է, որը վնասվածք է ստացել եւ այժմ հայրենիքում բուժվում է: Նրա խաղը հավանել են «Միկայի» մարզիչները: Էդնիլսոնը պետք է վերադառնա Երեւան եւ մասնակցի հունվարի 20-ից փետրվարի 3-ը Թուրքիայի Անթալիա քաղաքում անցկացվելիք 2-րդ հավաքին: Թուրքիայում նախատեսված է 3 ընկերական հանդիպում Ղազախստանի «Օրդոբասի», Տաշքենդի «Պախտակորի» եւ ռումինական «Ինտերնասյոնալի» հետ:**

**Ուսումնամարզական 3-րդ հավաքը կկազմակերպվի փետրվարի 10-22-ին Կիպրոսում, որտեղ նախատեսված է ստուգողական 4 մրցախաղ: Իսկ մարտի 1-15-ն առաջնության նախապատրաստական վերջին փուլը թիմը կանցկացնի Իսպանիայի Մալագա քաղաքում, որտեղ «Միկան» 3 խաղ կանցկացնի: Մրցակիցներից մեկը կլինի Մոսկվայի «Դինամոն»:**

**Առողջական խնդիրների պատճառով առայժմ Երեւան չի ժամանել կոտդ'իվուարցի Բոտի Դեմելը, որն անցած մրցաշրջանում 14 գնդակով «Միկայի» լավագույն ռմբարկուն էր: Ինչ խոսք, մինչեւ մրցաշրջանի մեկնարկը «Միկայում» եւս մի քանի ֆուտբոլիստներ կփորձարկվեն: Թիմի մարզիչները կազմը համալրելու հարցում աշխատում են: Այնպես որ չի բացառվում նոր ֆուտբոլիստների ընդգրկումը «Միկայում»:**

# «Հատիսն» ավարտեց ելույթները եվրոգավաթում



ՖՈՏՈԼՈՒՐ

**Երեւանի «Հատիսի» բասկետբոլիստուհիներին չհաջողվեց հաղթահարել Եվրոպայի գավաթի խաղարկության 1/16 եզրափակիչի արգելքը: Դրա համար մեր թիմին անհրաժեշտ էր երեկ Օրենբուրգում «Նադեժդայի» հետ կայացած խաղում մրցակցին հաղթել առնվազն 12 միավորի տարբերությամբ, քանի որ Երեւանում «Հատիսը» պարտվել էր 69-80 հաշվով:**

**Պատասխան խաղում «Հատիսի» վիճակն ավելի էր ծանրացել, քանի որ վնասվածքներ ունեին թիմի ավագ Բոյանա Վուլիչն ու Ամանդա Ջեքսոնը: Չնայած դրան, նրանք մասնակցեցին խաղին: Բացի նրանցից, Օրենբուրգ էին մեկնել նաեւ Տաթեւիկ Ալեքսանյանը, Միլիցա Դաբովիչը, Ադենլա Օլանրեւայուն, Գաննա Զարիցկան ու Աննա Պոկոյովան:**

**Որքան էլ որ «Հատիսը» ջանաց առավելության հասնել մրցակցի նկատմամբ, դա թիմին չհաջողվեց: «Հատիսը» պարտվեց 65-80 հաշվով ու դուրս մնաց գավաթի խաղարկությունից: Հանդիպման առաջին կեսից հետո «Հատիսը» մրցակցին զիջում էր 5 միավորի տարբերությամբ (34-39):**

# Խորեն Գեւորը բաժանվել է Կլաուս Քոլից

**Գերմանական «Բիլդ» հանդեսի տեղեկացմամբ հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Խորեն Գեւորը հեռացել Կլաուս Պետեր Քոլին պատկանող Universum պրոմոութերական ընկերությունից: Անցած տարի լրացել է այդ ընկերության հիմնադրման 25-ամյակը: Վերջին ամիսներին այդ ընկերությունը լքել են Ֆելիքս Շտուրմը, Վլադիմիր Սիդորենկոն, Սերգեյ Դզինզիրուկը, Գենադի Գոլովկինը: Հիշեցնենք, որ այս ընկերությանն է պատկանում Արթուր Աբրահամի մենամարտերի կազմակերպման մենաշնորհը:**

# Ուժերի ստուգատես Մելբուռնից առաջ

Սիդնեյում ավարտին է մոտենում թենիսի մրցաշարը, որն ուժերի հիանալի ստուգատես է Ավստրալիայի բաց առաջնությունից առաջ: Կանանց մրցաշարում հայտնի դարձան եզրափակիչի մասնակիցները: Պատվավոր մրցանակը կվիճարկեն Ելենա Դեմենտեւան եւ Սերենա Ուիլյամսը: Դեմենտեւան 6-3, 6-1 հաշվով հաղթեց բելառուսցի Վիկտորիա Ազարենկոյին, իսկ Սերենան պարտության մատնեց ֆրանսիացի Ռեզաի Արավանին:

Տղամարդկանց մրցաշարում որոշվել են կիսաեզրափակիչի մասնակիցները: Ռիշար Գասկեն հաղթեց Պոտիտո Ստարաչեին (6-3, 7-6) եւ կիսաեզրափակիչում կմրցի Ժյուլյեն Բենետոյի հետ: Վերջինս առավելության հասավ Լեոնարդո Մայերի նկատմամբ: Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են Մարկոս Բաղդատիսն ու Մարդի Ֆիշը: Բաղդատիսը հաղթեց Լլեյթոն Հյուիթին, Ֆիշը պարտության մատնեց Պիտեր Լուչակին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Վաստակաշատ կենսագրություն



Հայկական հանրագիտարանը մեր ժողովրդի վերազարթոնքի լավագույն դրսևորումներից է. հիմնադրվել է 1960-ական թվականներին: Հայոց Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի առիթով համայն հայությունը մեկ անգամ ևս ընդվզեց հանուն իր իրավունքների ճանաչման և հայրենատիրության իրավունքի վերահաստատման: Եվ այդ օրերին ծնվեց Հայկական համապարփակ հանրագիտարան հրատարակելու գաղափարը. երկրի կուսակցական բարձրագույն իշխանությունը՝ ՀԿԿ կենտկոմը, որոշում ընդունեց (1964 թ. հոկտեմբեր) ստեղծել այդ կոթողային հրատարակությունը: Խմբագրությունը ձևավորվեց 1967 թ-ին: Նրա առաջին գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանի գլխավորությամբ ընտրվեցին առաջին մասնագետները: Նրանցից էր նաև Հենրիկ Խաչատրյանը, որ այսօր բոլորում է իր ծննդյան 70-ամյակը:

Նա 1967 թ-ի ապրիլից աշխատում է Հայկական հանրագիտարանի խմբագրությունում՝ որպես գիտխմբագիր, ավագ գիտխմբագիր, խմբագրության վարիչ, գլխավոր խմբագրի տեղակալ, ապա՝ «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-94 թթ.» հանրագիտարանի պատասխանատու խմբագիր-առաջատար մասնագետ:

Հայտնի է՝ հանրագիտարանը ճշմարտության ամենավերջին ատյանն է, ճշմարտություն, որը քննարկման ու մեկնաբանման ենթակա չէ: Հանրագիտարանի խմբագիրը, մանավանդ այս կամ այն ոլորտի ղեկավարն այդ ճշմարտությունն ամեն անգամ ապացուցելու և հաստատելու առաքելություն ունի: Մի բան, որ Հենրիկ Խաչատրյանն անում է շարունակաբար՝ արդեն շուրջ 45 տարի:

Նա այդ տարիներին հեղինակել և խմբագրել է բազմաթիվ հոդվածներ, ղեկավարել «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-94 թթ.» հանրագիտարանի ստեղծման աշխատանքները:

Հենրիկ Խաչատրյանը նաև մեր օրերի ակտիվ հրապարակախոս է:

1996 թ-ին հիմնադրել է «Կամք հայրենյաց» շաբաթաթերթը, եղել «Կամք» հասարակական-քաղաքական կազմակերպության հիմնադիրներից:

Հեղինակ է գյուղատնտեսական գիտությունների պատմությանը վերաբերող մի շարք հոդվածների, ակադեմիկոս Սահակ Կարապետյանի կենսամատենագիտության (1981 թ.), «Արդյունաբերական թռչնաբուծության զարգացումը Հայաստանում» վավերագրական ֆիլմի սցենարի (գյուղատնտեսական վավերագրական ֆիլմերի համամիութենական փառատոնի 1-ին մրցանակ, Աշխաբադ, 1983 թ.), «Հաղթանակներն ինչպես եղել են» (հայերեն՝ 2008 թ., ռուսերեն՝ 2009 թ.) գրքի, «Հայաղաղանում» տպագրված բազմաթիվ հոդվածների:

Շնորհավորելով Հենրիկ Խաչատրյանին՝ ծննդյան 70-ամյակի առթիվ, մաղթում ենք նրան քաջառողջություն, հաջողություններ և շարունակական բեղմնավոր գործունեություն Հայկական հանրագիտարանի հրատարակչությունում:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ**

# Գրանցվել է բանկի մասնաճյուղի գործունեության դադարեցում

Կենտրոնական բանկի նախագահի 2009 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 1/1615Ա որոշման համաձայն գրանցվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ թիվ 84 մասնաճյուղի գործունեության դադարեցումը:

Կենտրոնական բանկի խորհրդի դեկտեմբերի 29-ի թիվ 383Ա որոշման համաձայն «ԻԴՐԱՄ» ՍՊԸ-ին տրամադրվել է դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիա, թիվ 378Ա, թիվ 384Ա, 380 Ա եւ 379 Ա որոշումների համաձայն «ԽԱՎ» ՍՊԸ-ին, «ԱՄՈՒՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, «ՈՍԿԵ ԼՈՒՍԱ» ՍՊԸ-ին եւ «ԱՐՄԵՆ ԿՐՏՍԵՐ» ՍՊԸ-ին տրամադրվել են գրավատան կազմակերպման լիցենզիաներ:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

**HIGH-LEVEL E.U.**
**ADVISORY GROUP TO ARMENIA**

**Vacancy Announcement VA 01-10-HR**

The EU Advisory Group to Armenia Project fully funded by EC and implemented by UNDP invites applications from qualified and experienced candidates for the position of **National Expert on Phyto-sanitary Regulations to assist the International Adviser to the Minister of Economy on Sanitary and Phyto-sanitary Regulations.**

Please visit **http://operations.undp.am/recruitment/** to obtain full Job Description, application procedures and requirements.

Applications can be submitted on-line through **http://operations.undp.am/recruitment/** site, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan str.

A complete application form should consist of a letter of interest, copies of diplomas, an updated CV and the UN Personal History Form (P11), available at the UN House Security Desk. Please clearly indicate in your application the title of the position and the VA Number.

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below. Applications received after the closing date will not be considered. Only short-listed candidates will be contacted.

**Date advertised:** **15 January 2010**
**Closing date:** **28 January 2010, 18:00**

***Women candidates are encouraged to apply***
***UNDP / UN House is a non-smoking environment***

**United Nations Development Programme**

**Vacancy Announcement -01/10/SSA**

The United Nations **"Development Programme in Armenia in the framework of Developing Institutional and Legal Capacity to Optimise Information and Monitoring System for Global Environmental Management in Armenia"** Project invites applications from qualified and experienced specialists for the position of **Database and Information Systems Specialist.**

Please visit **http://operations.undp.am/recruitment** website to obtain full **Terms of References**, application procedures and requirements.

Applications can be submitted through **http://operations.undp.am/recruitment** website, or delivered hard copies to the UN House Security Desk, 14, P. Adamyan Str.

Applications can also be sent via post offices within a deadline period indicated below. A complete application form should consist of a letter of motivation, full CV. Incomplete applications will not be considered. Only short listed applicants will be contacted.

**Application Deadline: 28 January 2010, 18:00**

***Women candidates are encouraged to apply***
***UNDP / UN House is a non-smoking environment***

Ի փոփոխումն ՀՀ կենտրոնական բանկի կողմից 24.11.09թ. տրված հայտարարությունների տեղեկացնում ենք, որ՝

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգչային, ցանցային եւ տպող (պատճենահանող) սարքավորումների սպասարկման համար անհրաժեշտ պահեստամասեր եւ նյութեր ձեռք բերելու նպատակով կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի ամփոփման ժամկետը 2010թ. հունվարի 14-ից տեղափոխել ս.թ. հունվարի 22-ը:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար տպագրական աշխատանքներ իրականացնող կազմակերպության ընտրության հրապարակային մրցույթի ամփոփման ժամկետը 2010թ. հունվարի 14-ից տեղափոխել ս.թ. հունվարի 22-ը:
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի շենքերի եւ շինությունների ընթացիկ վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով կազմակերպություն ընտրելու համար հրապարակային մրցույթի ամփոփման ժամկետը 2010թ. հունվարի 14-ից տեղափոխել ս.թ. հունվարի 22-ը:

**REA.am**

***Տեղեկատվության, գովազդի եւ հայտարարությունների կայք***

Բացառիկ հնարավորություն՝ բոլորի համար

Նորաստեղծ www.rea.am (real estate of Armenia) ինտերնետային մասնագիտացված պորտալն իր տեսակի մեջ մի շարք առումներով բացառիկ է Հայաստանում:

1. Կայքն **ունի 4 բաժիններ**՝ անշարժ գույք, շարժական գույք (ավտոմեքենա, կահույք, էլեկտրոնային ապրանքներ եւ այլն), աշխատաշուկա եւ ծառայություններ: Այսինքն, **մեկ մասնագիտացված կայքում կարելի** է տեղադրել եւ ծանոթանալ բոլոր այս 4 ոլորտների առաջարկի ու պահանջարկի մասին մասնավոր անձանց հայտարարություններին եւ կազմակերպությունների գովազդային առաջարկներին:
2. Կայքը **եռալեզու է (հայերեն, ռուսերեն, անգլերեն)** եւ յուրաքանչյուր լեզվի էջն ունի իր առանձնահատկությունները:
3. Ձեր հայտարարություններն ու գովազդը **www.rea.am** կայքում անմիջապես հասանելի են դառնում **ավելի քան 300 հազար ինտերնետից օգտվողների համար Հայաստանում եւ միլիոնավոր ինտերնետից օգտվողների համար ամբողջ աշխարհում**:
4. Յուրաքանչյուրը Հայաստանում կամ **աշխարհի ցանկացած երկրից**, այցելելով **www.rea.am** ինտերնետային կայք, կստանա իրեն անհրաժեշտ տեղեկությունները մեր երկրում բնակարան գնելու կամ վարձակալելու, ավտոմեքենա վարձույթով վերցնելու, աշխատանքի շուկայի առաջարկի եւ պահանջարկի, տարբեր ծառայությունների եւ այլ առաջարկությունների մասին:
5. Պահանջվող տեղեկությունը հաշված վայրկյանների ընթացքում գտնելու համար գործում են **որոնման եւ ընդլայնված որոնման հզոր համակարգերը**:
6. Տվյալների բազան անընդհատ **թարմացվում է**:
7. **www.rea.am** կայքի այցելուները կծանոթանան նաեւ բոլոր այս **4 ոլորտների** վերաբերյալ նորություններին, շուկաներում իրավիճակի վերլուծությանը, բազային տվյալներին, գործող ընկերություններին եւ բազմաթիվ այլ տեղեկությունների:
8. Հայտարարությունների եւ գովազդի համար գործում են **ամենացածր գները** Հայաստանում, իսկ երկարաժամկետ հայտարարությունների համար **ամենամեծ զեղչերը**:

Հայտարարություններն ընդունվում են
Միեր Մկրտչյան փ. 10 հասցեում՝
աշխատանքային օրերին ժամը 10:00-18:00,
շաբաթ-կիրակի օրերին ժամը 12:00-16:00,
ինչպես նաեւ էլեկտրոնային եղանակով edram
համակարգի միջոցով:
Տեղեկությունների համար զանգահարել 56-36-57,
էլեկտրոնային հասցե՝ info@rea.am



ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.01.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: